

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ. Էջմիածին—Վահրամ Եպիսկոպոս Մանկունի..... Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ
 ՆՈՐԱՎԼԷՊ. Մեծ հարսանիք ժը. Օրիորդի մ'օրաթերթէն քաղեալ յիշատա-
 րերէ (ԼիւիՏՕՎԻԻ ՀԱԼԷՎԻ) Թարգմ..... Թ. ԹԻՐԶԵԱՆ
 ԳՐԱԿԱՆ. Վիլիթոր Հիւկոյ իւր տուն մէջ (ԱՌՍԷՆ ՀՈՒՍԷՅ).....
 ԶԱՆԱԶԱՆՔ. 1885ի Զմեռնի Սպանիա.....
 ԳԱԽԱՌԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹՔ. Խուլթիկ գիւղ. Ննուհ և Մկրտուիթիւն... Յ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ
 ՔԱՂՈՒԱՄ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային.....
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՕՆԹԻԲԷՆ) Թարգմ..... Մ. ԶՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս	—տարեկան.....	Կէս ոսկի Օսման .
» »	վեցամսեայ	Բառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 ձրանք
Թղթատարութեան ծախք	»	15 դան. արծաթ
Մէկ Թերթին գինն է		60 փարայ

Մասիսի Խմբագրութեան ուղղեալ ո' եւ է գրուելուն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
 Ղալաթիա, Նոյնառնկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 22 փետր.
ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնարայի վրայ (պանքայի)	440	1/8
3 » » » (վճռահան)	409	5/4
3 » Բարիսի » (պանքայի)	22	95
» » » (վճռահան)	23	02 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՎԹՈՅ

Օսմանեան Քոնսոլիտե

Երեկ երեկոյ գոց. (Միաց. D. Սէրի)	49	28
Պօրայի գոցուեցէն վերջը »	49	36
Բերայի մէջ »	49	33
Առաւօտուն բացուեցաւ »	49	32
Բարձրագոյն գին »	49	32
Նուազագոյն »	49	30
Կէս օրին »	49	30 1/2

Փոխառութիւն	1858)	A.	Սէրի անգլ. ոսկի	36	22
»	1862)				
»	1860)				
»	1863)	B.	»	»	20 25
»	1872)				
»	1865)				
»	1869)	C.	» Օսմ.	»	49 27
»	1873)				

ԻՆՆԻՓԻԷ ԵԳԻՍՏԱԿԱՆ

Երեկ երեկուն գոցուեցաւ	75
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.	74 35
Կէս օրին	74 37 1/2

ԲԱՃՆԵՏՈՒՄՍԻ

Սօսիէթէ Ենէրալ	Գ. Կ. Անգլ. Լ. 3 45
Գրէտի Ենէրալ	» » Օսմ. » 7 4
Պանք տը Գոնս	» » » » 5 20
Սօս. Նանթ է վայելօր	» » » » 3 25
Թրամուէյ	» » » » 280
Իռմէիի երկաթուղի	Քր. 47 25
Օպիկտիօն տը Բրիտիէթ	» 412
Բաժնեթուղթ Լաւրիօմի	» 66

ԸՆԲԱՅՔ ՂՐԱՄԱԳ

Օսմանեան ոսկի	772. ... 400
20 Ֆրանկոնոց	» ... 87 49
Անգլիական ոսկի	» ... 440 43
Բօլ Լաբէրիալ	» ... 90 5
Գրիմից	» ... 51 40
Ռուսկի թղթագրամ	» ... 8 51
» արծաթ	» ... 89 40
Ֆիօրին	» ... 9 3
Մէճ. արծ. (տարբ.)	» ... 407 36
Վ. Էջնոց	» ... 403
Հինգնոց	» ... 403 40

Մէթալիք	» ... 99
Պղինձ	» ... 800
Թղթագրամ	» ... 3500

ԵՆԻՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 5 Մարտ Ժամ 5 վայր. 45 երեկոյ

Անգլ. քօնսոյիէ գոցուեցաւ	97 15 1/16
Օսմ. բացուեցաւ	48 15 1/16
» » գոցուեցաւ	47 7 1/8
Միացեալ Կրուք 1	36 1 1/4
» » 2	20 5 1/4
» » 3	47 7 1/8
Փոխառութիւն	1877
» 1877	83 1 1/4
Պանք Օթօման	14 5 1/8
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	95 5 1/8
Եգիպտական միացեալ (Ինիֆիէ)	67 1 1/8
» առանձն. (Բրիտիէթիէ)	88 5 1/3
Տայրա Սանիէ	65
Տօմանիալ (փոխառ. Բօշիլ)	86 1 1/4
Հունգարական պարտաթուղթ 1877	—
Փոխառութիւն Բարիկի վրայ	—

Վ. Իէննա, 5 Մարտ Ժամ 4 երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	424 50
Օսմանեան երկաթուղի	23

Բարիկ, 5 Մարտ Ժամ 45 վայր. երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	409 60
» » 3 0/0.....բաց	81 85
Օսմանեան քօնսոյիտ բացուեցաւ	48 35
» » գոցու. գ. Կ.	48 27 1/2
Միացեալ պարտք Սէրի Բ.	21
» » Գ.	48 00
» » Դ.	—
Օսմանեան երկաթուղի	47 75
» Բէթիի բաժնեթուղթ	—
Պանք Օթօման	615
Գրէտի Լիօնէ	552 50
» Ֆոնսիէ գ. Կ. Բարձրացում 1357 50	
Բաժնետոմս Լիօնի (գոցու. կտր.)	1265
Սուէզի ջրանցք	Բարձրացում 2055
Ռուսական 5 0/0 1877ի (գ. Կ.)	99 5 1/8
Իտալական Ռանթ (գ. Կ.)	97 40
Եգիպտական միացեալ գոց	342 50
Սպանիական (արտաքին) (գ. Կ.)	61 5 1/8
Բրիտիէթ Բիւրք	417 50
50/0 Հելլենական (գ. Կ.)	355
2էք Լոնարայի վրայ	25 38

ԲԱՐԻԳ ԲԹԻԹ ՊՈՐՍԱ

Մարտ 5 Ժ. 40, Վ. 30

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0.....	409 58 1/4
Օսմանեան »	48 22 1/2
Եգիպտական միացեալ	341 25

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34րդ ՏԱՐԻ

1885 ՓԵՏՐՈՒԱՐ 23

ԹԻՒՆ 3758

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՎԱՀՐԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԿՈՒՆԻ

— Երբ Էջմիածին դնաս, պիտի տեսնե՞ս Մանկունին :

— Կը յուսամ :

— Ուրեմն զգոյշ կայ :

— Ինչո՞ւ :

— Նա մի այնպիսի մարդ է որ չուտ կը գրաւէ իւր խօսակցին համակրութիւնը, սիրելի կ'ընծայէ ինքզինքը նմա, տպաւորութիւն կը գործէ նորա վրայ, համառօտ ըսել, ծաղկազարդ թակարդ կը լարէ. քեզ համար մեծ վտանգ կայ :

— Փոյթս չէ. այնքան կտուրդ սիրտ չունիմ և այնքան չուտով չեմ տպաւորուիր :

Այս խօսակցութիւնը տեղի կ'ունենար Տփղիս մի քանի բարեկամաց և իմ միջեւ այն գիշերն, որոյ յաջորդ օրը կը մեկնէի յԷջմիածին : Սրտիս կարծրութեան վրայ որքան ալ ապահով լինէի, բայց և այնպէս չէի կարող անգոսնել բարեկամաց խորհուրդներն : Այնպիսի սլարադայներու մէջ, որոց մասին փորձառութիւն չունինք, յանձնապատանութիւնը լաւ խորհրդական մը չէ. հետեւաբար, անօգուտ չհամարեցի մի քիչ հսկել ես իմ վրայ : Բայց, կ'ըսէի ինքնին, ի՞նչ ունի այս Մանկունի եպիսկոպոսն, որոյ գէմքէն և խօսքերէն իսկ զգուշանալ խոհեմութիւն կը համարուի :

Մայիս 7ին արդէն երկու օրեր էին յորմէ հետէ կը գտնուէի Էջմիածին, և սակայն ոչ ոք կը խօսէր Մանկունի եպիսկոպոսի մասին :

սին : Արդեօք այդ դեր-կաթողիկոսը, Հայոց այդ երկաթէ կանչէրը այդքան շո՛ւտ մոռացութեան դատապարտուած էր. բայց այդ տագնապալից աւուրց մէջ խօսելու ուրիշ շատ առարկայներ կային քան զբաղիլ Մանկունի եպիսկոպոսի անձովը : Սակայն կարող չեղայ երկար համբերել. ուստի մայիսի 7ին երկուշաբթի օրն այս խնդրոյ վրայ խօսեցայ Հ. Խորէն Վ. Ստեփանէի, որոյ հետ բարեկամացած էի : Աչքերս ածեցի չորս կողմըս որ ասահով լինիմ թէ սենեկին մէջ ուրիշ ոչ ոք կար, և ցած ձայնով մը ըսի Հայր Սուրբին .

— Փափաքող եմ տեսակցիլ Մանկունի եպիսկոպոսին հետ. ի՞նչպէս կարելի է :

— Նաա դիւրին. եթէ կը կամիք՝ միասին գնանք :

Ապրիլացայ : Ի՞նչ, Էջմիածնոյ միաբանութեան անդամ մը համարձակի՞ այցելութեան երթալ եպիսկոպոսի մը որոյ համբաւոյն չըսինքը, համբաւ չարաչառի, դժուար է տալով հայ աշխարհը. եպիսկոպոսի մը որ աքտորեալ է և որ ուշ կամ կանուխ եկեղեցական շանթերու պիտի ենթարկի կ'ըսեն :

— Իմ յարաբերութիւններս նորա հետ լաւ չէին, բայց հոգ չէ՛. ժամանակ անցաւ. շատ քան կերպարանափոխ եղած է, ըսաւ Հ. Խորէն :

Երբ կրակ ու բոց վարդապետն արտասանեց այս խօսքերը, նմարելի էր իւր դիմաց վրայ վայրկենական թեթեւ տխրութիւն մը : Վերջէն խնայ թէ Մանկունի եպիսկոպոս բաւական վնասած է այդ ուսեալ վարդապետին : Բայց Կաթողիկոսի մահը, Մանկունիի դժբաղդը, և որ աւելին է, վնասականաց մէջ տիրած նորանոր գոթութիւնը մարած էին շատ հին տառութիւն-

ներ : Ընդհանրապէս վտանականք չուտ ան-
յիշազար կը լինին : Վանքերու մէջ ատելու-
թիւնք կը նմանին ծովու կոհակներու . մին
կը մըէ զմիւսը . վտանականք պարտաւոր են
չուտ մոռնալ հին ատելութիւններն , որպէս
զի ժամանակ և միջոց գտնեն նուիրելու ի-
րենց բոլոր ոյժը նորանոր ատելութեանց :
Չեմ ակնարկեր Հ. Յորէն Ստեփանէին , վտան
զի էջմիածնայ միաբանութեան մէջ իւր ու-
սումովը եղական եղող այս վարդապետը ա-
ւելի ինքն առարկայ եղած է թշնամանաց ,
քան ինքն այլոց չարիք հասուցած :

Մայիս 7ի երեկոյցին , երբ սկսած էր մը-
թըննալ , ճանբայ ինկանք Յարգոյապատիւ
վարդապետին հետ դէպ յախարակայն Ման-
կունի Վահրամ եպիսկոպոսի : Վանքէն մի
քանի վայրկեան հեռու է այդ ախարակայն
Վաղարշապատի ֆէ ֆաղոյն վրայ : Պէտք է
գիտնալ թէ Վաղարշապատ ալ ունի իւր ֆէ
ֆաղոյն : Քիչ թէ շատ լայն պողոտայ մը՝ որոյ
երկու կողմն , իրարմէ բաւական հեռաւորու-
թեամբ , շարուած են շէնքեր , հարով և թրի-
քով չաղուած . այդ շէնքեր հաւանօրէն պէտք
է տուն լինին , այնքան պարզատեսիլ՝ մինչ
կարծել կուտան թէ կառուցուած են ա-
ռանց ճարտարապետի աջակցութեան : Փո-
շին կը թաղաւորէ անդ առանց մրցակցի :
Եւ այս ամէնը միթէ բաւ չէ՞ որ այդ լինի
տըքայական փողոցը : Ճշմարիտ երջան-
կութիւնը սակաւապիտութեան մէջ կը
կայանայ կ'ըսեն . եւ այս ճշմարտութեան
հաւատարիմ մնացած են Վաղարշապատի
մեծ փողոցին հիմնադիրներն : Բայ դըռ-
նէ մը ներս մտանք եւ վեր ելանք փայ-
տէ սանդղակներէ : Եթէ արտաքուստ ո-
չինչ ունին հրապուրիչ Վաղարշապատի տու-
ները , ներսէն բաւական դիւրութիւններ
կ'ընծայեն բնակողաց : Միշտ ետականու-
թիւն : Դէմերն՝ ս ելաւ մի պարոն , կամ ըստ
եւս մի աղայ : Զմեզ բարեւեց երկիւղած
կերպով , բիչ մը մեղաւոր մարդու դէմքով .
կարծես թէ կ'ուզէր ըսել . « Զողե մոխիր եմ » :
Ոչ այն օրը , ոչ վերջը հարցուցի թէ ո՞վ էր նա :
Գուցէ Պոստեյի էր , գուցէ Վաղարշապատ-
ցի էր , գուցէ Վրացի էր . բայց ես միայն
դրի թէ մեր Ստեփանիկ աղան էր , և պէտք
էր այնպէս ալ լինէր , ու ապահով եմ թէ
այնպէս ալ էր . նոյն ինքն պատմական Ստե-
փանիկ աղան էր . մարդու մը ո՞րքան քիչ-քան

պէտք է աշխարհիս վրայ պատմական լինե-
լու համար : Գէորդ Կաթողիկոս , Վահրամ
եպիսկոպոս և Ստեփանիկ աղայ , ո՞րքան
տարիներէ ի վեր այդ երեք անուններն ի մի
ձուլեալ միշտ կը լսէինք , ի մեծ դժբաղդու-
թիւն հայ եկեղեցւոյ :

Ստեփանիկ աղան հրամցուց զմեզ Ման-
կունի եպիսկոպոսի սենեակը . չափաւոր մե-
ծութեամբ սենեակ մ'էր . դրան աջ կողմը
փառքէ և աթոռներ , ձախ կողմը գրասե-
ղան մը , որոյ առաջը նստած էր եկեղեցա-
կան մը , գլուխը բայ : Երբ տեսաւ որ մենք
ներս կը մտնէինք՝ ելաւ տեղէն եւ եկաւ մեզ
ընդ առաջ :

Օրը սկսած էր տարտաթափլ . մութը կո-
խած էր , ճրագը նոր կը վառուէր . սեն-
եակին մէջ կը տիբէր հանդարտ լուծիւն :
Երեքնիս ալ կը քաջութիւնք իրարմէ :

— Բարի եկաք , ըսելով տանտէրը խղից
լուծիւնք :

Սակայն ինձ այնպէս երեւցաւ թէ հիւ-
րենիալ եկեղեցականք , նոյն ինքն Մանկու-
նի Վահրամ եպիսկոպոսը , մի քիչ տալած
էր այսպիսի հիւրեր ընդունելուն : Կարծես
իւր աչքերը կ'ըսէին . — « Դուք ա՞ստ » : Հ.
Ստեփանէն զիս ներկայացուց . բաւական
դժուար կացութեան մէջ էի , վտան զի էջ-
միածնայ Դիկտատորին ի նպատտ գրիչ չար-
ժողներէն չէի , թէպէտ ոչ ալ ջերմ հակա-
ռակորդ : Սրբաղանին ձեռքն ուղեցի . ան-
չուչա ներողութիւն խնդրելու դիտումով
չէր , այլ պարզապէս սովորական քաղաքա-
վարութեան պարոք կատարելու նպատա-
կաւ , եւ համբուրեցի , բայց փոխարէնը տո-
կոսեօք ստացայ : Սրբաղանը երկու ձեռքը
քնեքքներս պինդ սղմելով , դրօշմեց ճակտիս
տմենաջերմ համբոյր մը : Յիշեցի Տփղիսի
խօսակցութիւնս :

Կը տեսնէի դէմս միջահասակ եպիսկո-
պոս մը , բայց մարմնոյն լայնութեան բա-
ւական ոյժ առած . կողմը լաւ էր եւ ա-
ռաղլ . գլխուն մազերը , մոմաւանդ ձախ-
տին չուրջը , ըստ բաւականին թափած :
Մօրեքը , խորաեւաշ , ցոյց կուտայ մի քանի
ձերմակ թեւեր . երկու բիբերուն աչքերուն
մէջ կը շրջին ու կը շրջին : Կը խօսէ բոր-
բօքեալ : Անհանդարտ , անհանդիստ դէմք մը
որ ի վեր կը հանէ խուովայոյց եւ ալեծուկ
հոլի մը : Այդ գլխաց ամէն մէկ դէմք մը-

րայ կրնաս կարգալ թէ չարաչար զղջումներով տագնապող հողի մ'է դիմացի :

Եւ ի՛նչպէս չզղջայ . տասն եւ վեց տարիներ բացարձակ իշխանութիւն կը վարէր հայ եկեղեցւոյ կեդրոնավայրը . բաւական խելացի էր , արտաքոյ կարգի գործունեայ , եւ ինչե՛ր կարող չէր չընել : Եւ այդ անցեալէն ի՛նչ թողուց իւր անձին համար : Հակակրօնութիւն եւ թշնամութիւն : Թշնամութիւն կառավարական շրջանակներու մէջ , հակակրօնութիւն ժողովրդեան դասերու մէջ : Եւ ի՛նչ թեթեւ սխալներ : Բաւական էր Մանկունի եպիսկոպոսին մի քիչ շրջահայեաց լինել , լաւ խորհել եւ ապա գործել . և այսօր ամենամեծ ապագայ մը իւր առաջ բաց պիտի տեսնէր ու հայ եկեղեցականութեան պարագլուխներէն մին պիտի լինէր : Բայց պիտի ըսուի թէ շատ դիւրին գործ չէ խորհիլ եւ շրջահայեաց լինել : Յոյժ երկտասարդ և անտորձ , կը նետուէր Պրուսայէ յԷմիածին , անդ կը վայելէր Կաթողիկոսի մը անսահման վստահութիւնը . կը նսմանէր այն մարդուն , որ մինչ ոչինչ ունի , յանկարծ մեծ հարստութեան մը զլուխ կ'անցնի , չըւարած կը մնայ . չգիտնար զայն գործածելու եղանակը և կը փճացնէ : Եւ երբ փորձառութիւնը կուգայ ու կ'սկսի մտածել , ա՛լ արդէն ուշ է : Տփղիսի հայ մամուլը միշտ աննպաստ եղած է նոյն . Մշակ ի մասնաւորի շատ խիստ լեզու մը գործածած է : Մշակի մեզ ազդած տալաւորութեան ներքեւ էր որ երբ սրբազանը մի քանի տարի առաջ Պոլիս եկաւ , շատ առիթ չմտաւեցինք զինքը տեսնելու . բայց այժմ փոխուած էին պարագայները :

Երկու հին ոսոխք , Մանկունի եպիսկոպոս եւ Հ. Խորէն Ստեփանէ , կարծես անմիջական հաշտութիւն մ'ունեցան եւ սրբտերնին բաց կը խօսէին միմեանց հետ անցեալի վրայ , յուզեալ սրտիւ , բայց ներողամիտ ձայնիւ : Այդ խօսակցութեան վրայ եղող մէկը կարող է բաւական ճիշդ գաղափար մը կազմել Էմիածնայ վանուց մէջ տիրած հոգւոյն , տեղի ունեցած դարձրուածքներու մասին :

Ի՛նչ որ ալ լինին Մանկունի եպիսկոպոսի գործունէութեան մասին տիրող նըպաստաւոր կամ աննպաստ կարծիքներն , որոց վրայ ապագայ պատմութիւնը պիտի

կարենայ արդար վճիռն արձակել , այժմէն սա ապահով է որ Մանկունի եպիսկոպոս անգնահատելի աւանդապահ մ'է այն ամէն անցից պատմութեան ոյք Գեորգ Կաթողիկոսի Հայրապետութեան օրերու մէջ պատահեցան : Ի՛նչ փորձառութիւն , ո՛րքան տեղեկութեւնք , ի՛նչչափ խորին կերպով թափանցումն ամէն դաւաճեաց : Այդ ժամանակներու կենդանի պատմութիւնն է , եւ միանգամայն պատմութեան փրկիստիտյութիւնը : Եթէ այսօր յանկարծ վախճանի այդ եկեղեցականը , արդարեւ Հայոց պատմութիւնը մեծ կորուստ մը կ'ընէ : Պարագայներն կը հարկադրեն զնա մեկուսացեալ կեանք վարել . այդ միայնութեան մէջ անշուշտ պիտի գրէ իւր համբարած ընդարձակ ծանօթութիւններն . յետ այնորիկ կարող է հրապարակ ելնել ու գործել , կամ լռել :

Բայց միայն Էմիածնայ տասն եւ վեց տարիներու պատմութիւնը չէ որ իրեն ծանօթ է , այլ նաեւ Հայոց Հայրապետը հաղորդած է նմա շատ կարեւոր ծանօթութիւններ Պրուսայ վաղեմի անձանց եւ իրողութեանց մասին : Երբ այդ տեղեկութիւններէն մի քանին տուաւ ինձ , ապշած կը նայէի : Ո՛չ կիրք ունէր , ո՛չ ատելութիւն , վասն զի ո՛ր եւ է մաս և բաժին չէ ունեցած այդ ժամանակներու անցից մէջ , եւ իւր ձայնն ունէր անկեղծութեան շեշտը . ուրեմն կարող էի դիւրաւ հաւատալ : Որպիսի անձինք զորս այսօր դափնիններով կը պսակենք եւ ծանր վայրկեաններու մէջ օգնութեան կը կոչենք , պիտի երեւէին մեզ սեւադէմ , եթէ հանդուցեալ Կաթողիկոսը կարող լինէր վեր վերցնել գերեզմանին կափարիչը եւ իւր վեհագոյ ձայնով արտասանէր անոնց դատաւինքն : — Սակայն ի՛նչ ըսել . մեր մէջ այնքան քիչ բան ոչտը է անձի մը՝ ազգասիրի եւ հայրենասիրի համբաւ վայելելու : Եւ դուցէ քիչ մ'ալ այնպէս լինի ամէն կողմ : Պիտի կրնայ Մանկունի եպիսկոպոս բանալ մեր առաջ Պրուսայ գործոց անցեալ վարագոյրները : Զեմ կարծեր . պիտի լռէ հաւանօրէն գէթ մինչեւ այն ատեն որ այն ժամանակի գործիչներն արդէն առանց բացառութեան գերեզման իջած լինին :

Բայց կարող է անվտանգ խօսիլ Գեորգ

Կաթողիկոսի Հայրապետութեան զանազան անցքերու մասին :

Ի մասնաւորի մի քանի տեղեկութիւններ խնդրեցի հանգուցեալ Հայրապետի ռուս կառավարութեան վերաբերմամբ հետեւած քաղաքականութեան մասին :

Այդ խիստ եւ անողորմելի ռուսատեցութիւնը մեզ այնքան օգտակար չէր թուած: Մանկունի եպիսկոպոս մի քանի բացատրութիւններ տուաւ այդ մասին: Ըստ Մանկունի Սրբազանի, Գէորգ Կաթողիկոս իւր Հայրապետութեան առաջին ժամանակներն ըրած է ինչ որ կարելի էր ընել, որպէս զի սերտ բարեկամ եւ մտերիմ երեւի յաշտ Ռուսաց կառավարութեան: մինչեւ իսկ իւր դրից Հնամապատասխանող խնարհութիւններ յանձն առած է, վասն զի դիտէր թէ կառավարութեան Հայոց նկատմամբ տածած լաւ արամադրութիւններէն ազգը կարող էր մեծապէս օգտուի: Սակայն ամէն զոհողութիւն, ամէն դիջողութիւն անօգուտ եղած են. կառավարութիւնը ոչ մի փոփոխութիւն չէ ըրած: Հայոց Հայրապետն, այլ եւս յուսահատ, եւ նկատելով որ իւր անձնաւորական զոհողութիւնքն իսկ արժէք մը չունին յաշտ Ռուսաց, կ'սկսի հետեւիլ բոլորովին հակառակ ուղղութեան մը: Զերմ ռուսասէրը կը լինի Զերմ ռուսատեաց:

Պէտք է խոստովանիլ թէ Թիֆլիզ, Երեւան, կարծիքները տարբեր են: Ընդհանրապէս խելահաս անձինք համոզուած են որ Վեհ. Կաթողիկոսը պէտք էր երբեք չկորուսանել իւր համբերութիւնը, եւ մանաւանդ անախորժ ու անպէտ ցոյցերէ զոյշ կենալ:

Վեհ. Գէորգ Կաթողիկոսի քաղաքական սխալներէն մին եղած է անշուշտ Մանկունի եպիսկոպոսէն անբաժան մնալու տենչը: Ամէն ոք գիտէ այն ծանր պարագայն յորում գտնուեցաւ Մանկունի Վահրամ եպիսկոպոսն: Երբ կը ձեռնադրուի եպիսկոպոս, առաջին պատարագին մէջ որ կ'ընէ իւր եպիսկոպոս, չենք գիտեր ի՞նչ մտածութեամբ, չուզեր յիշատակել Ռուսաց Ալէքսանդր Բ. կայսեր անունը: Մեծ սխալմ'էր այս այնպիսի եպիսկոպոսի մը համար որ իրեն գործունէութեան ասպարէզ ընտրած էր զԵջմիածին: Ի՞նչ հարկ, ի՞նչ պէտք արտաքին ցոյցերով ներքին զգացումներն ակներեւ հրապարակ հանել: Մանկունի ե-

պիսկոպոս այդ ցոյցով կարող չէր «ազգասէր» ի համբաւ վայելել: Ռուսիոյ Հայք ողջախոհ են եւ չեն կարող ներել որ ո եւ է հրապարակային անձ իւր անհատական նկատումներով վտանգէ ամբողջ հասարակութեան շահը: Անտարակոյս ասպագային մէջ Մանկունի եպիսկոպոս ինքն եւս ստրջացաւ իւր երկտասարդական աշխոյժին թեւադրութեանց այնքան դիւրութեամբ անսած լինելուն, բայց զղջումն այլ եւս օգուտ չունէր:

Այն օրն յորում Մանկունի եպիսկոպոս այդ անտեղի հանդիսաւոր ցոյցն ըրաւ, խոհեմութիւնը եւ ազգային շահը կը պահանջէին որ Վեհ. Կաթողիկոսն, առանց վայրկեան մ'իսկյապաղելու, աքսորէր Եջմիածնէն այդ տաք դուռնի եկեղեցականը. Էջմիածին կ'օգտուէր աղկէ եւ շատ մ'անհիմն պարտութիւնք յաշտ կեդրոնական կառավարութեան կը փարատէին: Բայց կաթողիկոսն այլ կերպ կը խորհի. պինդ կը դրկէ իւր ձեռնասունը եւ զնա միշտ եւ յուստ կը նկատէ իւր աջ բազուկը: Երբ կը ծագի թուրքո-ռուսական պատերազմը, Կովկասու փոխարքայ և Ալէքսանդր Բ. կայսեր եղբայր Միխայէլ Նիքոլայէվիչ մեծ դուքան դալով Եջմիածին, ի մէջ այլոց կը խնդրէ Վեհ. Կաթողիկոսէն Մանկունի եպիսկոպոսի հեռացումն Եջմիածնէ: Կաթողիկոսը կը դիմադրէ: « Եթէ Մանկունին ունի մի յանցանք, ասացէք եւ դատապարտեմ զինքը, կ'ըսէ: Իսկ եթէ Պատարագի մէջ Վեհ. կայսեր անունը չլիչեն իրեն յանցանք կը վերադրուի, ի՞նչ կարող եմ ըսել նա թուրքիոյ հպատակ է, հետեւաբար պարտաւոր չէ Ռուսաց կայսեր անունն յիշատակել: — Կաթողիկոսը կարող էր ամէն նուրբ փատերու դիմել, բայց արդարացումը կարող չէր փարատել արդէն թողւած վատ տըպաւորութիւնը: Մեծ-Դուքսը սպառնալիքներ կ'ընէ, սակայն Կաթողիկոսն անդրդուելի կը մնայ:

Իւր այս յամառութիւնը արդարացնելու համար Կաթողիկոսը կ'ըսէ եղբւր. «Յոյց տըւէք ինձ մի այլ վտահանքի անձ, եւ ես Մանկունին զոհեմ»: — Դժբա՛ղդ Կաթողիկոս, դժբա՛ղդ հայ եկեղեցի որ կարող չէ դանել երկու հաւատարիմ ոգիներ:

Եւ ո՛րքան սխալներ արտաքին եւ ներ-

ըին զորս Կաթողիկոսը գործեց եւ որոց աւելնուն ալ պատասխանատուութիւնը ըստ բաւականին կը ծանրանայ Մանկունի եւ պիսկոպոսին վրայ։ Եւ սակայն այդ Կաթողիկոսն ունեցաւ իւր մեծ գործերն։ Ամենայն զօրութեամբ եւ ոյժով կը պահպանէր իւր եկեղեցին, իրեն յանձնուած սուրբ աւանդը։ Կը դիմադրէր դատարանաց վճիռներուն որը կը հակառակէին եկեղեցւոյ շահուց։ Ներսէս Յ. Կաթողիկոսի ժառանգներն, ապաւինած Պալաթէնիայի, կը պահանջէին նորա թողած ժառանգութիւնը. դատարանն իրենց իրաւունքը կուտար։ Ելմիածին կը դիմէր վճռաբեկ ատենի, վասն զի Պալաթէնիայի երկու տրամադրութիւնները փոխուած էին եւ եկեղեցականաց ժառանգութիւնը կը մնար իրենց վանուց։ Սակայն այդ բարեփոխութիւնը յետ մահու Ներսէս Կաթողիկոսի տեղի ունեցեր էր, եւ օրէնքը չէր կարող յետագարձ ազդեցութիւն ունենալ։ Ներսէս Յ. ժառանգորդը կը վատարկին դատը նաեւ վճռաբեկ ատենին առջեւ. սակայն այդ վճիռն եւս կը մնայ անգործադրելի։ «Ձինուորական զօրութիւնը թող գայ գործադրել դատարանի վճիռը, կը պատասխանէ Կաթողիկոսը, բայց նախ իմարմնոյս վրայ կ'օխէ, իմ գիակիս վրայէն անցնի եւ այնուհետեւ մտնէ գանձարանը»։

— Կաթողիկոսի այս զխնադրութիւնը կ'արգելու այդ վճիռի գործադրութիւնը մինչեւ ցայսօր։ Ամէն մեծ պարագայի մէջ այսպէս էր Կաթողիկոսը, արի եւ անձնուէր։ Կառավարութեան հետ դպրոցական խնդրոց մասին թէ՛ խեղճով եւ թէ՛ խոհակամութեամբ գործեց եւ յաջողութիւն ձեռք բերաւ։ Կրթական գործոց համար մեծ հոգ տարաւ, թէեւ ոչ միշտ հարկ եղած միջոցներով։ Եւ սակայն ոչ ոք կ'ուզէ Կաթողիկոսի այս փառքերէն մաս հանել Մանկունի եպիսկոպոսին։ Անշուշտ անիրաւութիւն մ'է այս։

Բարձր պարտականութիւններ ունեցող անձինք երբեմն կը մոռնան խորհելու թէ՛ իրենց համար երկրորդական համարուած խնդիրք ի՞նչ աստիճանի կարեւորութիւն կ'ունենան ժողովուրդի համար։ Եւ երբ Կաթողիկոս մ'է որ պարտի հսկել իւր ժողովուրդի հոգւոյն եւ սրտին վրայ, որքան զգոյշ շարժի, կարծեաւ դարձեալ քիչ պիտի

համարուի։ Այդ փոքր համարուած սխալներէն մին ամենախորին կերպով վիրաւորած է ժողովուրդի զգացումներն եւ նորասէրն առ Կաթողիկոսն նուազեցուցած. այս գործողութեան մէջ Մանկունի եպիսկոպոս տուած է բարոյապէս աւելի քան զայլ ոք։

— Ռուսիոյ մէջ եկեղեցականութիւնը բաւական փափաքելի պաշտօն մ'է, զի եկեղեցականը կը վայելէ կարգ մը առանձնաշնորհումներ։ Հայոց մէջ եւս քահանայ ձեռնադրուելու փափագողներ շատ կան, ոչ թէ անձերնին սուրբ կոչման մը արժանաւոր գանձընուն համար, այլ բոլորովին տարբեր նկատումներով։ Ի մասնաւորի գիւղացիք կը փափագին քահանայ ձեռնադրուել։ Գէորգ Կաթողիկոս օր մը կ'ըսէ. «Ձեռնադրեցէք քահանաներ, մեղք է, թող Ստեփանիկն ալ շահի»։ — Այս խօսքը բաւական կը լինի որ Ռուսիոյ Հայք խորին եւ մեծ ցաւ մ'զգան իրենց սրտին խորէն Կաթողիկոսի մասին։ — Քահանայ ձեռնադրուող գիւղացին կուտայ 200 կամ 300 կամ աւելի ռուսլի ըստ սակարկութեան, որպէս զի այդ պաշտօնը ի ձեռս բերէ։ Այդ ստակը պէտք է առնուր Ստեփանիկ աղան, եւ շահէր։ — Ձեռ գիտեր թէ այս պատմութիւնը մինչեւ ո՞ր աստիճան ստոյգ է, բայց տարածուած է, եւ ցաւալի իրողութիւն մը չէ՞ որ այսմ հաւատացողը բազմաթիւ են։ Ինչ որ ստոյգ է՝ սա է թէ շատ անգամ սոցյակներն Նրեւանու ճանքէն դալով կանգ կ'առնուն Ստեփանիկ աղայի տան դրան առաջ. հայ գիւղացիները կը մտնեն Ստեփանիկ աղայի տունը. հոն կը գանուի երբեմն Մանկունի եւ պիսկոպոս ալ, սակարկութիւնը կ'ընեն, ստակը կուտան եւ օր մը գիւղացին իւր փափաքը կը փոխէ քահանայական քլիսայի, շնորհիւ իւր ռուսլիներուն։ Այս նողկալի պատմութիւններն հանրածանօթ են ամէն ուրեք։ Ստեփանիկ աղան Գէորգ Կաթողիկոսի ծառան էր ի Պրիս, Էֆէֆայքը, միասին տատարած յէջմիածին, ուր կ'ամուսնանայ։ Հոգ չէ թէ շատ գուրգուրանք ունենայ Վեհափառը նորա համար. կարող էր ընծայներ իսկ տալ. բայց թոյլատրել որ եկեղեցւոյ բարոյական վիասովք օգտուի մի ո՛ր եւ է անձ, այդ աններելի է։ — Ստեփանիկ աղային ունեցած դերն այսքան է. մարդը ուրիշ մեղք չունի, լուիկ մնջիկ մարդ մը, ո՛չ

մէկուն վնասող, ո՛չ մէկուն դործին խառնուող :

Պատմութեան այս մանր լիշրանքներն ըստ բաւականին վատ կերպով ազդած են Ռուսիոյ հայ ժողովուրդի Էջմիածնայ մասին տաճած զգացմանց վրայ : Իցէ՛ թէ նորընտիր Կաթողիկոսն իւր նախորդին մեծ դործոց միայն հետեւող լինի :

Մանկունի Սրբազան առ այժմ՝ առանձնացեալ է : Իւր դատական խնդիրն համարածանօթ է . աւելորդ է աղոր վրայ խօսիլ : Կարծեմ թէ վախազող է ո՛ր եւ է միջոցաւ Պոլիս դալ, եւ դժգոհ չպիտի լինի եթէ Ռուսիոյ կառավարութիւնը, ի նկատի առնելով նորա հրատարակութիւնները, վաճառէ զնա իւր երկրէն : Գուցէ այս լինի իւր գաղտնի շարժառիթն այնքան կծու դրելու Ռուսիոյ կառավարութեան դէմ :

Թէպէտեւ Էջմիածնայ վանքէն քաջուած է, բայց հոն իւր յարաբերութիւնները ընդարձակ են . ոստիկանութիւն մը հաստատած է վանքին մէջ, ուր ինչ որ դառնայ անմիջապէս կ'իմանայ, շատ անգամ նոյն իսկ Կաթողիկոսական տեղապահութենէն ալ առաջ : Հարկ է ըսել որ իւր ստացած, կամ լուսնա ի Պոլիս հաղորդած տեղեկութիւններէն շատերը կէս ուղիղ կէս սխալ կրնան համարուիլ : Անդուսպ գործունէութիւն ունի . կարծես ինքզինքը կ'ուտէ . իրեն համար կ'որոնէ դործունէութեան ասպարէզ . երբ Պոլիս դայ, հաւանօրէն իւր ժամանակը նուիրէ մեծ մասամբ դրելու « Վեշտաստանակայ պատմութիւնը » : — Բայց կարծեմ թէ մեզ ալ բաւական վրդովում կը պատճառէ նորա ներկայութիւնն ի Պոլիս :

Գանը մեր տեսակցութեան . մօտ երկու ժամու խօսակցութենէ վերջ վերադարձանք ի վանս : Կը վախազէի ուրիշ օր մը դարձեալ երթալ եւ աւելի ընդարձակօրէն տեսակցիլ, բայց ժամանակը եւ պարագայները չներեցին :

Մայիս 11 ին Էջմիածնէն մեկնած օրս կարող եղայ ճանապարհին կանգ առնուլ եւ մնաք բարով ըսել : Նոյն օրն վանքէն մեր մեկնած միջոցին հասած էր Ներսէս Սրբազանի հրաժարականը . ես վանքին դռնէն դուրս կ'ելնէի երբ հեռագիրը ներս մտաւ . նոյն ժամանակ Մանկունի եպիսկոպոսին գացի, արդէն հեռագրին մի օրինակը իւր մօտ

էր : Այսքան սերտ են իւր յարաբերութիւնը վանքին հետ, թէպէտ արտաքուստ ոչինչ նշանակ կայ :

Ներսէս Սրբազանի Կաթողիկոսութիւնն ընդունելու կամ չընդունելու մասին բաւական խօսակցեցանք, որուն համար օգտակար խորհուրդներ տուաւ : Կը կարծեմ թէ այդ խորհուրդներն օգտակար կրնային լինիլ, բայց Ներսէս Սրբազան արդէն աստ բանակցութիւններն սկսած էր, եւ հրաժարականը զրկած :

Մանկունի եպիսկոպոսի մասին գրելիքներու շատ մեծ պաշար կայ, բայց այսքանըս բաւ կը համարիմ : Ո՛ր դիտէ, ապագային մէջ թերեւս առիթ կ'ունենանք աւելի երկար խօսելու :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՆՈՐԱՎԵՊ

Մ Ե Ծ Հ Ա Ր Ս Ա Ն Ի Ք Մ Ը

ՕՐԻՈՐԴԻ ՄՕՐԱԹԵՐԹԷՆ ՔԱՂԵԱՂ ՅԵՇԱՏԱԳԻՐՔ

25 Նոյեմբեր 1882, ժամ 4

Այս առաւօտ ժամը տասին՝ Պեթովին 25րդ սօնադն հետ մեծամարտելու վրայ էի՝ եւ ահա դուռը կը բացուի : Մայրիկս էր : Մայրիկս այս ժամուն արթնցած՝ ելած : Եւ ոչ միայն արթնցած՝ ոչ ելած միայն՝ այլ հագուած սգուած, ուսոց վրայ լողիկ մ'եւ դիտարկը դիտուն վրայ :

Չէի յիշեր բնաւ թէ մայրս այսպիսի ժամուն ելած տեսած ըլլամ : Երբէք կիրակի օր Ս. Կըդիլտէ չկրնար հասնիլ ժամը մէկին պատարագին կէսէն առաջ, եւ միւս իրիկուն խնդարով մը կ'ըսէր այդ ազնիւ Բօնիլալաբաբային :

« Մեր սիրուն կրօնքը, Տէր Աբբա, ըստ ամենայնի կատարեալ կ'ըլլար՝ եթէ ժամը երկուքին մեզ պատարագ մը տայիք : Քօնսէրվաթուարի նուագահանդէսն ալ ժամ մը կը յետաձգուէր, որով ձմեռ ատեն սքանչելի կիրակիներ կ'ունենայինք » :

Այսպէս մայրս տեսնելուս ապշած՝ աղա-
ղակեցի .

— Դո՞ւրս կ'ելլես՝ մայրիկ :

— Ոչ, տուն կը վերադառնամ :

— Կը վերադառնաս :

— Այո, այս առաւօտ երթալիք տեղ
մ'ունէի . . . Հիւսած օթոցիս յարմարելու
բուրդեր կային . . . Գիտես . . . այդ չղբո-
նուելիք կապոյտը :

— Գոնէ գտա՛ր :

— Ոչ, ոչ . . . բայց խոտապան որ նային
գտնեն . . . և կը յուսամ . . . վաղը կամ առ
առաւելն միւս օր . . . ինձ կը յղեն . . . :

Ասոր վրայ մայրս կ'սկսի խօսքերն իրա-
րու խառնակել, և՛ յետ կնճռոտ և տաժա-
նելի շրջաբանութեանց վերջապէս կը ծանու-
ցանէ ինձ թէ այն իրիկուն Մէրսըրէներուն
պիտի երթանք . . . Քիչ մ'երաժշտութիւն
պիտի ըլլայ եղբի հոն . . . Երեք օր առաջ
մայրս գիտէր զայն և միայն չէ եկեր ըսե-
լու . . . :

Տեղէս չէի երեքար : Մայրս մտիկ կ'ընէի,
ուշի ուշով կը գննէի ու մոքէս կ'ըսէի .

« Լեզուին տակ բան մը կայ : Այսպէս
մութն ի լուսուն ելլելը, կապոյտ բուրդին
պատմութիւնը, Մէրսըրէներուն երեկոյթը . . .
Մայրիկս լեզուին տակ բան մ'ունի . . . խօս-
քերը կը շփոթէ » :

Եւ՝ առանց բերան բանալու՝ թողուցի որ
բարբաճէ : Բանախօսութիւնն աւարտելէն
յետոյ՝ մայրիկս թատերական կեղծ չարժ-
մամբ մ'ելլել ձեւացուց, յետոյ ետ դառնա-
լով անտարբերութեամբ մ'ըսաւ .

— Ի՞նչ հազուելու միտք ունիս այս ե-
րեկոյ :

— Ի՞նչ դիտնամ՝ մայրիկ . . . դորշ չըր-
ջադէստոս, կամ կապոյտ շրջադէստոս կամ
վարդագոյնը . . . :

— Ձէ, չէ . վարդագոյնը չըլլար : Կա-
պոյտը հագիր : Այդ գոյնն առջի օրը քեզ
չատ վայելէր էր՝ Քլարիս մօրբօջոյ տունը :
Բայց այդ վարդագոյն շրջադէստոս՝ հայրդ
աչք չունի տեսնելու, և որովհետեւ ինքն
ալ այս երեկոյ Մէրսըրէներուն պիտի գայ . . . :

— Հայրիկս Մէրսըրէներուն . . . :

— Այո, ի՞նչ կայ :

— Գիտնալով ալ որ երաժշտութիւն կայ :

— Գիտնալով՝ այո՛ . զարմանալու ի՞նչ
կայ .

— Ոչինչ, մայրիկ . ի՞նչ պիտի ըլլայ :

Ասոր վրայ մայրիկս դուրս կ'ելլէ և այս
անգամ առանց թատերական կեղծեաց :
Միայնակ կը մնամ Այն ատեն առանց վայր-
կեան մը վարանելու՝ կ'ըսեմ ինքնին .

— Ամուսնութեան մը խնդիր կայ հոս :
Աղջկոտեսի կ'երթամ, և ասոր համար հայ-
րիկս ալ ստիպուած է ուղեկցելու մեզ :

Մտածեցէք հայրս՝ խեղճ հայրիկ՝ մօրս
ետեւէն երեկոյթի մ'երթայ ուր, երաժշտ-
ութիւն ալ պիտի ըլլայ : — Աշխարհիս ա-
նիւր դարձեր է : Հայրիկս որ երեկոյին մի-
այն երեք բանէ համ կ'առնէ . Քլիւս, Օքէ-
րա — Պարուց միջոցին — և մօրը թատ-
րոններն, այն թատրոններն ուր կը խնդան՝
կ'զբօսնուն, այն թատրոններն ուր ներքի
չէ մեզ երթալ, այն թատրոններն ուր կեան-
քըս անցնեմ պիտի հաղիւ թէ կարդուիմ :

Այո՛, աղէկ դիտեմ, տեսակցութեան մը
համար է : Եւ այդ տեսակցութիւնն նորա-
նշան բան մ'ըլլալու է, որովհետեւ առաւօ-
տէ ի վեր ի՞նչ վիճակի մէջ է մայրիկս . ի՞նչ
վիճակ . . . Բերանը բան չգրաւ : Տեղը հան-
դարտ չկրնար նստիլ : Տիկին Լուսաղէին գը-
րեց որ ինքն անձամբ գայ այս երեկոյ մա-
ղերս շտկելու : Ուշի ուշով աչքէ անցուց կա-
պոյտ շրջադէստոս : Մասնաւոր մտադրու-
թեամբ աչքս վրաս յառած կը դիտէ վիս . . .
Ի՞նչ յուսահատութիւն արտին հրա-
շագեղ անձիս վրայ թեթեւ երաշխեւ մը
նշմարելով :

— Այդ ի՞նչ է հոգ, աղաղակեց :

— Ո՛ւր, մայրիկ :

— Քիթի ծայրը :

— Ի՞նչ, քիթի ծայրը բա՞ն մը կայ :

— Այո՛, սոսկալի վէրք մը :

Սիրտ ի դող հայելոյս կը վազեմ : Փա՛ռք
Աստուծոյ . . . բան չկար : Պօպի թաթիկին
մէկ հարուածն, ամենամանր վարդէ նիւ մը
զրեթէ ոչինչ : Այս երեկոյ բոլորովին ան-
հետ կ'ըլլայ : Այդ մանրիկ վարդագոյն նշա-
նը՝ մօրս աչաց զարհուրելի սպի մը կ'երե-
ւայ : Երբեք թիւս ծայրն այսչափ կաթողին
խնամոց նիւթ ելած չէր : Մայրս հարկադ-
րեց զիս որ օրուան կէսն անչարժ անցնեմ
թիկնաթուիս մէջ բազմած, պաղ ջրոյ մէջ
թաթաւեալ լաթեր ակնոցի պէս վերոյիշեալ
թիւն վերոյիշեալ ծայրն անցնելով :

Ագնիւ սիրուն մայրիկ : . . . Այդ հալիւ կը

մաշի որ օր առաջ կարգուիմ: Բայց բնական ալ է այդ: Ժամանակին շատ գեղեցիկ եղած է մայրիկս: Հիմայ ալ տակաւին երեկոյթից մէջ կը փայլի, և որչափ ըլլայ, իմ հասակին կարգուելու աղջիկ մը հետն աստանդ տարուբերելն իրեն գործին գալու չէ: Ինձ ալ ծանր կուգայ, կ'զգամ որ տարիքս կ'առնեմ, և երբ երեկոյին միատեղ տուն մ'երթանք, քրտնք կը ձգեմ գինք, ու իրարու ըստ կարի քիչ հանդիպելու սլայմանաւ իւրաքանչիւրնիս՝ զատ զատ՝ առանց իրարու արգելք ըլլալու՝ փոքրիկ գործերնիս կը տեսնենք:

Խեղճ սիրո՛ւն մայրիկ . . . որչափ ալ բարեհալի է . . . Կան անզգամ մայրեր որ աղջիկնին կը հրեն կը մղեն կոյր վրուսայն հինգ վայրկեանի մէջ ամուսնանալու: Մայրիկս ազնոյցմէ չէ: Գիտէ թէ միտքս դրած եմ հարեւանցի որոշում չտալու: Ամուսնութիւնը թեթեւ գործ մը չէ: Եթէ խաբուի մարդ՝ բոլոր կենացը համար խաբուած է: Կարծէ որ լաւ մը մտածենք: Ես լուրջ ամուսնութիւն մ'ընել կ'ուզեմ: Խնդիրն առաջին տեսութեան խարտեալ կամ թուխ պարոնի մը հետ սիրահարելով՝ տուն վերադարձին մօրն ըսելուն վրայ չէ: «Մայրիկ՝ ահա սիրածս, մայրիկ՝ ահա ուղածս»: Զէ. խելքը գլխէն կորսնցնելու չգար: Արդէն անցեալ դարձան հինգ բաւական ընդունելի հետամուտներ մերժեցի, բայց անոնք չէին ընձեռներ ինձ զարմի՝ հարստութեան և ընկերական սլայմանի այն ամէն առաւելութիւնները զոր պահանջելու իրաւունք ունենալ կը կարծեմ: Այս ձմերուան արշաւանացս մէջ ալ նոյն ուղւոյ անդորրութիւնն և խոհեմութիւնը պիտի ցուցնեմ: Դեռ քսանամեայ չեմ: Կրնամ սպասել:

Բայց յայնմանէ՛ այս առաւօտէ ի վեր՝ իմ վրաս գոհ եմ՝ շատ գոհ: Մօրս յուզումն ինձ չաղգեց, և այսօր ալ ըստ սովորականի հանդարտ ու անվրդով յուշատետրս կը շարունակեմ:

Այն օրն ուր 18 իս կոխեցի՝ խստիւ բանալոյ տալ՝ սահուած այս տետրակին առաջին էջին վրայ այս խօսքը գրեցի:

Ամուսնութիւնս:

Եւ արդէն հինգ հոգի գիտեալաւ ըզգեսնեցան: Այս երեկոյ՝ ասպնով եմ՝ կարդը վեցերորդ հետամտին է: Նա՛ է արդեօր

սահմանեալ իմ ամենախոնարհ և ամենահնազանդ տէրս ու իշխանս ըլլալու:

Որ գինչ և է. թող պատրաստուի նա առաջառագոյն և մանրակրկիտ քննութեան մ'ենթարկուելու:

Մօրս պէս չեմ ես: Խելքս գլխէս չուտով չերթար:

26 Նոյեմբեր, 4 ժամ

Զէի սխալեր . . . Այո՛, վեցերորդն էր: Բայց կարգաւ երթանք, և երեկ իրիկուան մեծ ու փոքր դէպքերն մանր մանր նշանագրենք:

Յետ ճաշու՝ հագուելու կ'ելլեմք մայրիկս ու ես: Առանց շտապելու կարեւոր խնտիքը կ'ընեմ: Վերջապէս ուշադիր կ'ըլլամ՝ ինչո՞ւ ծածկեմ: Ժամ ու կէսէ յետոյ հացիւ վար կ'իջնեմ: Ի դարձիս ճամբու վրայ բոլոր դռները բաց կը գտնեմ, և մինչդեռ առանց աղմկի փոքր սրահին կը մօտենայի՝ կը լսեմ հայրիկս որ մօրս կ'ըսէ.

— «Ուստի կը կարծես թէ կարեւոր է. . .

— «Ամենակարեւոր . . . : Մտածէ անգամ մը: Ներկայութիւնդ անհրաժեշտ է: Փորձութեան չեմ գիտնար: Կանգ կ'առնում . . . մտիկ կ'ընեմ . . . Քիչ մ'ալ իրաւունք չունէի՞: Կ'ըլլայ աւելի օրինաւոր հետաքրքրութիւն մը:

— Ինչո՞ւ անհրաժեշտ, կը կրկնէ հայրիկըս: Այդ երիտասարդը կը ճանչեմ: Ստէպ կը պատահի իրեն Քլիւպին մէջ: Իրիկուն մ'ալ հետը Ուիտը մ'ըրի . . . Շատ գէշ չխաղար . . . Երեկ Նրանեակը ձիու վրայ տեսեր ու սքանչացեր է: Այդ արէկ. բայց ես հոգի՞նչ ընելիք ունիմ: Այդ ձեզ վերաբերեալ գործ է . . . քեզ՝ և Նրանեկին:

— Բարեկամս, կ'ապահովեմ գրեզ որ ամենակարեւոր պատշաճութիւն մ'է . . . :

— Լաւ . . . լաւ . . . կ'երթամ՝ կ'երթամ . . . :

Եւ ըլլութիւն . . . Ոչինչ . . . Անուան կ'սպասէի . . . Անուն չ'իայ: Սիրտս լանջացս մէջ քիչ մը կը կայթէր . . . և . . . որովհետեւ քիչ մը սեղմեալ էի՝ շատ սեղմեալ՝ որդը որդը կը լսէի որ լանջապանակին բաղխելով Բէ+ Բէ+ Բէ+ կ'ընէր: Հոն կը մնամ երկու վայրկեան . . . երեք վայրկեան . . . : Զէին ուզեր բան մ'ըսել ինձ, ես բան չգիտեալ ձեւացնելու էի:

Եւ սակայն բան մը գիտէի՝ և ամենա-

կարեւոր բան մը: Քիւլալի անդամ էր: Աչքիս առջեւ մեծ կարեւորութիւն ունեցող կէտ: Եւ այսչափ կարեւորութիւն տալուս յանցանքը՝ հօրս է: Իրեն համար Քիւլալէն չեղողը՝ մարդ չէ: Այս դաղալիարներով մեծցած եմ: Ամուսինս Քիւլալէն սիրտի ըլլայ:

Հանտօյով կը մեկնէինք երեքս ի միասին, հայրիկս լուռ ու մունջ և գլխիկոր, մայրիկս ալ միշտ նոյն յուզման մէջ...: Ես առ երեւոյթս՝ անվրդով. բայց մտքէս ինչե՛ր կ'անցնէին...: Այդ խորհրդաւոր կերպերն ի՛նչ ըլլալու են: Առջի օրն այս պարոնը զիս հեծեալ տեսեր էր. — Ուրախ եմ որ զիս հիանալի գտեր է: Ի՞նչն էր արդեօք որ զիս տեսնել ուզած էր լոյս աչօք և քէօլնէ: — Ըստ իս այս ըլլալու բան չէր: Նայս գինքն, այս պարոնն՝ իմ քննութեանս ենթարկելու էին՝ իմ անձս հեծեալ և հետի իրեն ցուցնելու պատիւը չնորհելէ առաջ: — Եղածն եղած է:

Ժամը տաան և կէսին Մէրսընէներուն կը հասնէինք: Խեղճ հայրիկ, աւա՛ղ. յիրաւի երաժշտական երեկոյթ մ'էր՝ այդպիսի հաճոյից անվարժ անձի մը համար տաժանելի երեկոյթ մը...: Քառանուագ մը... եւ դասականին դասականը...:

Քիչ մարդ... քսան հոգւոյ չափ... նորանչան երեկոյթ մ'որոյ շտապու և յանպատրաստից ըլլալն աչքի կը զարնէր. ասդիէս անդիէն ծաղկաքաղ մը, անդուլտ եւ անյանդ. կոշնականք իրարու անծանօթ էին. մին միւսոյն պատկանաւոր չէր: Մէրսընէներուն բժիշկը, նոցա ճարտարապետն, նօտարը՝ թիւ լեցնելու համար հրաւիրեալ յայտնապէս, ակտուները պարապ չձգելու համար:

Իրաւ ալ է որ Նոյեմբեր ամսուն շնորհօք բան մը տնօրինելը սոսկալի բան է: Այնչափ քիչ մարդ կայ Բարիզ...: Նոյն իսկ սակաւաթիւ խմբակ մը կազմելու համար դո՛հ ըլլալու է այնպիսի անձերով որ հազիւ Մայիս ամսուան բացօթեայ կատարուելիք մեծ տօնախմբութեան մը հրաւիրելի անձինք են:

Հասնելունս պէս Սօնադի մը յուշիկին (անգլանիէ) վրայ կ'իյնանք, այնպէս որ կըրցանք ոտն ի մատին՝ անպզալի կերպով սըպըրդիլ: Կ'երթամ փոքր անկիւն մը կը քաշուիմ և հոնկէ՛ արագութեամբ մի ակնարկով՝

պատերազմի դաշտը կը դիտեմ: Աստ անդժերեր կտոմ ծերուկներ՝ թորմած թափթըփուկ բաներ: Ինձ համար բան չկայ հոս... բայց դիմացի անկիւնը խմբակ մը չորս պարոնիկներու՝ դեռ չորսն ալ անտիպ: Վարանելիք չկայ: Հոն է թշնամին:

Այո՛, բայց ո՞րն է: Հետեւեալ տրամախոհութիւնն կ'ընեմ որ իւր պարզութեամբն ինձ հրաշալի կ'երեւայ: « Աւելի կատաղութեամբ աչուքները վրաս յառուէն է » . Իմ աչուքներս համեստաբար կը խոնարհեցնեմ և Հայտընի սօնադին լուրջ հաճոյից բոլորանուէր փոքրիկ զգօն օրիորդի մը ձեւ ու գիրքը կ'առնում:

Յետոյ յանկարծ քիթս վեր կը վերցնեմ, և հայեցողածքս շեշտակի չորս պարոնիկներու խմբակին վրայ կ'իյնան: Բայց վերցուցածէս աւելի արագութեամբ կ'ստիպուիմ քիթս վար առնելու: Չորսն ալ ակն յանդիման հետաքննութեամբ և ակներեւ հաճոյիւք ինձ կը նային...: Կը թողում որ սօնադը քիչ մը յառաջ երթայ և փորձը կը վերսկըսիմ...: Նոյն հետեւանք...: Տակաւին այդ չորս զոյգ աչք վրաս ակնապիլ յառած են... և նմանապէս մի քանի անգամ:

Ինձ կը թուի թէ այդպիսի մտադրութեան արժանի եմ: Լաւ էի, շատ լաւ: Այս տարուան գիւղը շատ օգուտ ըրաւ ինձ: Քիչ մը վրայ եկայ, շատ չէ, պէտք եղածին չափ: Վերդինէ՛ սպասուհիս՝ երէկ զիս հագուցած առեն կ'ըսէր: « Ոհ, օրիորդը չդիտեր թէ այս ամառ որչափ վրայ աւաւաւ » . Վերդինէն կը խաբուէր. Օրիորդը շատ լաւ գիտէր զայն. այսպիսի բաներն ամենէն առաջ գիտցողն օրիորդը կ'ըլլայ:

Վերջը քառանուագին: Փոքր չլուկ մը... Այլ չեմ գիտնար: Մայրիկս քիչ մը մեկուսի տանելով իրեն կ'ըսեմ.

— Կը սպառաւիմ մայրիկ, մէկ մը ցցուր ինձ դինք:

— Չարածձի դքեղ... ուրեմն գուշակեցի՞ր...

— Հապա, հապա... բայց ցցուր ինձ, չուտ, չուտ. հիմա նուագը կը վերսկսի:

— Կը տեսնե՞ս այդ ձախակողմի թուլս դիմօք պատանին՝ Մէսօնիէի նկարի մը տակ... հիմա մի՛ նայիր... աչքը վրայ է:

— Մինակ ինք չէ. ամենքն ալ, ամենքն ալ աչուքներն վրաս են տնկեր:

— Ալ չնայիր... Տեա... Հօրդ... կը մօտի... րեն բան մը կ'ըսէ

— Շատ դէշ չէ...

— Այդ ալ խօսք է, դէշ չէ՞ :

— Բերանը քիչ մը մեծկակ... :

— Ինձ այդպէս չթուիր :

— Ոհ, այո՛ մայրիկ... բայց ինչ և է՝
ամբողջութիւնը կ'անցնի :

— Եւ դիտնայիր... դարմ՝ հարստութիւն՝ ինչ որ կրնաս բաղձալ : Այդչափ տարօրինակ պատահար մ'է :

— Անո՞նք :

— Կոմս տը Մարթէլ-Սիմիէօզ... շատ մի նայիր... : Նորէն աշուրները վրադ դարձան... : Այո՛, Մարթէլ-Սիմիէօզ մ'է... : Եւ Մարթէլ-Սիմիէօզները՝ Լանտի Սիմիէօզ և Մարթէլ ժօնդաքներու հօրեղբորդիք են... : Այդ՝ Մարթէլ-Սիմիէօզ ըսածնե՞րըդ... :

Երաժշտաց մին թօք թօք կը վարնէ փոքր ստղի մը վրայ... : Մօրս ճարտասանական ուղիները կը խափանին... կը նստինք... : Հիմա Մօզարի հատուած մ'է... նորէն կը կծկիմ ես անձուկ անկեանս մէջ խորին խորհնքի մէջ անդնդասող : Մեծկակ պատառ մ'ըլլալու է այս անգամ՝ վասն զի մօրս խելքը դիւնէն թուեր էր... : Կոմսուհի տը Մարթէլ-Սիմիէօզ... գոյգ մ'անուն... իմ անո՞ւրջս... երկու անուն ունենալ : Բնականապէս դքսուհի կոչուելը նախամեծար է աչքիս... բայց այնչափ քիչ դուքս կայ, իսկական դուքս : Միայն քսաներկու հասո՛ կարծեմ՝ ուստի այդպիսի յոյս մը տա՞ծէն եղջերուաքաղ մ'է : Թող կոմսուհի ըլլայ : Կոմսուհի տը Մարթէլ-Սիմիէօզ... դէշ անուն չէ... բերնիս մէջ կը յեղիւնդեմ զայն... : Մօզարի քառանուագը բնաւ չը լսեցի... : Երաւի Մօզարի կտո՞ր մ'է՝ զոր կը վարենն այս երկու ջութակը՝ այդ սրինգն և այդ բամբը : Այդ շորս գործիք ինձ երգ մը կ'երգեն որոյ պարոյրն է « Տիկին Կոմսուհի տը Մարթէլ-Սիմիէօզ » :

Անունը, կարեւորութիւն ունեցող կէտ մ'է : Անուն մը որ քաջ կը պատկանի և ախորժ կը հնչէ տիպարի մը քով... : Տիտղոսն ալ Քլիւզի պէս է : Ինձ տիպարս մի պէտք է... : Ռամկանա՛լ... քա՛ւ լիցի... թէեւ հազար և մի դիւերուն գանձերն ինձ տային : Աւելի կ'ընտրեմ Ալպեանց ան-

դիւ կողմը վիստացող Խաւացի իշխաններէն մին առնուլ... : Գոնէ իշխանուհի կ'ըլլաս... : Կոմսուհի տը Մարթէլ-Սիմիէօզ... :

Այո՛, որոշեցի... անունն ըսելիք չունիմ :

Նոր չչնկոց մ'ալ քառանուագէն վերջը... հայրիկս դէպի մօրս կուգայ, ես ալ կ'երթամ : Հասնելուս պէս մայրս՝ ևս քան զեւո խանդաբորբօր, կ'ըսէ ինձ... :

— Գործերը կայծակի արագութեամբ կը քալեն : Ինձ ներկայացուիլ կ'ուզէ, և հայրդ դիտեց որ ձայնը կը դողդղար : — Այդպէս չէ՞, բարեկամս :

— Այո՛, կը պատասխանէ հայրս՝ ձայնը կը դողար :

— Հայրդ զինքն ինձ պիտի բերէ : Եթէ աչքդ չբռնե՛ր՝ քովս մի մնար... եթէ հաճելի ըլլայ քեզ՝ կեցիր :

— Մնալը կը մնամ... բայց յայտնի է որ ինձ խորհելու ժամանակ պիտի տաս... Միշտ խոստացար ինձ որ չչտապեցնես :

— Միշտ բողբոլին ազատ պիտի ըլլաս : Բայց լաւ մտիկ ըրէ ինձ... ամէն օր դաժնուելու մարդ չէ այս... եթէ անոր ազդականներն ու խնամութիւնները ձանձնայիր... : Մայրը Բէրսինյի Լարօզ մ'էր... Մտածէ՛ մէկ մը... Բէրսինյի Լարօզ... :

— Լաւ, մայր, կ'իմանամ :

— Բէրսինյի Լարօզն վեր բան չըլլար... :

Անկէ վերը չկայ...

— Հանդարտէ՛ մայրիկ :

Հայրիկս զինք կանչելու դացեր էր... կը բերէ՝ և այն ատեն՝ երկու նուագաց անջրպետին մէջ չորսերնիս փոքր խօսակցութիւն մը կ'ունենանք : Յիրաւի յայտնապէս յուզեալ էր : Ինք որ հեռուէն այնպէս անվեհեր աչօք կը նայէր ինձ, մօտէն համարձակութիւն չունէր : Ես ուղածիս պէս դարձուցի խօսակցութիւնն և շատ նշանաւոր ճարտարութեամբ՝ վասն զի աշխարհիկ խօսակցութեան մը ստիպեալ բարբա՛ջանքներէն յետոյ յաջողեցայ տօրը վայրկեանի մէջ սովրելու ինչ որ կարելու էր ինձ զիտնալ դործերն ա՛լ աւելի յառաջ չգացած :

Ամէն բանէ աւելի Բարիպն է սիրածը... ես ալ նոյնպէս... դիւզէն կը ձանձրանայ... ինձ նման... Թրուվիլ կը զբօսնու... ինձ պէ՞ս... Հրապինուք որսը չսիրեր... Հրազինո՞ւք որս... Կանանց մարտիրոսութիւնն է այդ հրազինուք որսը որ մեր ձեռքէն կը խզէ մեր ա-

մուսիմներն ու անոնց բարեկամները, և զանոնք մեզ կը վերադարձնէ երեկոյին ու գետադառնալիս լիկեալ զգայազիրիկ :

Ընդհակառակն կը սլաշտէ ձի և երէհալած որսը.... Այս ալ բոլորովին ինձ նման.... Ո՛հ երէհալած որսն ուրիշ բան է.... Կանայք ալ կրնան անոր մասնակցիլ.... քանիցս միտքէս ըսած եմ.... «Ամուսինս կառք և ձի պիտի ունենայ», և այս ամենն ունի նա, և ինչպիսի կառքեր : Բարիզէն տասը յարասիս հեռու տէրութեան անտառ մը վարձած է : Առաւօտեան ժամն ութուկիսուն կը մեկնուի Բարիզու ամենէն հանգիստ կայարանէն՝ Հիւսիսոյ կայարանը : Ժամը 10ին արագ նախաճաշ մը կ'ըլլայ.... Տասնուկիսուն ձի կը հեծնուի.... Յէ ի բաց առեալ շատ տաժանեղի և շատ երկար որսոյ պարագայները՝ Բարիզ ժամանակին կը հասնիս թատրոնին և պարահանդիսին ներկայ դռնուելու համար :

Այս ալ բաւական չէ . ինքը բացարձակ տէր է իւր ժամանակին՝ իւր անձին և իւր ընչից : Ոչ հայր, ոչ մայր.... Ոչ որ՝ բայց եթէ կրտսեր եղբայր մը՝ Լամբաճիգ զորաց մէջ միամեայ կամաւոր.... և ամենահարուստ մօրաքոյր մը՝ տարեւոր և անորդի : Ուրեմն ընտանեաց գլուխն է նա : Մարթէլ Սիմիէօզ իւր ստացուածն է . կալուած մ'է Վանտէի մէջ տեղ մը : Ըսելու հարկ չկայ թէ բնաւ արամադիր չեմ տարուէ տարի վեց կամ ութ ամիս երթալու Վանտէի մէջ թաղուելու.... բայց վերջապէս հողատէր ալ ըլլալու է.... Վանտէն գէշ չէ : Վանտէն սեփական երեւոյթ մ'ունի :

Այս ամէնը տասը վայրկեանի կարճ միջոցին մէջ սովորեցայ, առ առաւելն քառորդի մը.... վասն զի Տիկին տը Մէրսըրէ չորսերնիս ալ լուրջ խօսակցութեան մը բռնուած տեսնելով—չորսերնիս ըսելուս կրնայի երեքնիս ըսել— հայրիկս բերան չէր բանար —երեքնիս.... կրնայի երկուքնիս ըսել՝ մայրիկս ալ շատ չէր խօսեր.... ուստի : Տիկին տը Մէրսըրէ (ի՛նչպիսի պարբերութիւն.... ի՛նչպէս մէջէն ելլելու է) յաջողեցաւ երկու քսուանուագին անջրպետն երկարելու :

Բոլոր այս տեղեկութիւններն ամենահեշտ և ամենաբնական կերպով ստացայ, մեր խօսակցութեան մասնաւոր դարձուած մը տալով, առանց բնաւ հարցում մ'ընելու : Մայրիկս այս առաւօտ ինձ յիշէր թէ երէկ

իրիկուան անխռով խաղաղութիւնս սարսափելի բան մ'էր : Ե՛հ, ի՞նչ ընենք, ես ալ չորքրիկ գործնական մասս ունիմ : Կ'ուզեմ կեանքս զետեղել անկախութեան և ապահովութեան մէկ քանի անվանդ պայմաններու մէջ : Առանց ատոր ոչ երջանկութիւն կայ, ոչ սէր և ոչ ինչ :

Այսպէս—զոր օրինակ —կեսուր չունիմ : Զգիտեմ ինչ չէի տար զօքանչ մը չունենալու համար : Վէճ չկայ, խօսք խառնել չկայ : Տանդ տիրուհին կ'ըլլատ, ամէն բան քուկդ է ամուսնէդ սկսեալ :

Ասոր համար անցեալ ամառն չորքրիկ Մարքի տը Մարինեաքը չուզեցի՝ (մին ի հընդից) և ի՛նչ ալ սիրուն էր : Ի՛նչ խնդացող և խնդացնող, և ինչպէ՛ս ալ սրտանց պիտի սիրէի զինքը.... սկսած ալ էի բայց մայրը տեսայ.... և կանգ առի :

Սոսկալի մայր մ'ունի. խտաբարոյ, կախերես, ամենի ջերմեռանդութեամբ վարակեալ, և կը պահանջէր ալ որ իւր հարսը տալին ութ ամիս իրեն հետ մեկտեղ երթայ Բրիտանիոյ խորերը թաղուի : Գիտեմ որ դրամի խնայութիւն մ'է բայց ինչպիսի՞ ստրկութիւն ալ : Ամուսնութեանդ յաջորդ օրը, հաղիւ դեռ չորքր աղջկան վիճակէն ազատած, նորէն հոն իյնալ.... ուրեմն ամուսնութեան առաւելութիւնն ի՛նչ կ'ըլլայ :

Ինչ կ'ըսէի.... խօսքս ալ մոռցայ.... հա՛ ալ յիշեմ նուագը կը վերսկսի.... վերջին կտորն էր : Հետեւեալ կարգաւ տողեալ կը նստինք. ես, մայրիկս, հայրս.... և ինքը.... : Նորանշան նախազգացումներ կ'ունենամ : Հաղիւ թէ ժամ մը կար որ զինքն առաջին անգամ ըլլալով տեսեր էի՝ և արդէն տեսակ մ'ընտանեկան կերպ առեր էինք, չորսերնիս ալ հոն ապուշ ապուշ մեր ավթուներուն վրայ շարուած :

Մեզ շարք մը Պեթովիկ համառօտ վախեր կը խաղային՝ մէկ նուագէն միւսը չորքր անջրպետներ թողլով :

Առաջին անջրպետ : Մայրիկս ինձ կ'ըսէ. — Լաւ, հիմա որ զինքը տեսար, և հետք խօսեցար.... տալուորութիւնդ ի՞նչ է :

— Նոյնը՝ մայրիկ :

— Աղէ՞կ :

— Գէշ չէ :

— Ուրեմն հայրդ կրնայ զինքը ճաշի հըրաւիրել :

- Ո՛հ, մայրիկ շատ շուտ կերթաս :
- Շուտ երթալու ստիպուած ենք :
- Ինչո՞ւ մայրիկ :
- Որովհետեւ.....բայց լռէ կը վերսկըսին :

Մտմտութեամբ կ'առնէ զիս.....այսչափ շուտ երթալուն պատճառն ի՞նչ է : Խեղքս ասոր չի պնտկիր.....ինձ այնպէս կը թուի թէ զիս այս պարտին գլուխը կը հանեն.....անհամբեր եմ գիտնալու . այդ փոքրիկ վալսն ինձ անվերջ կ'երեւայ : Փառք Աստուծոյ վերջնապէս երկրորդ անջրպետը կը սկսի : Նորէն խօսքը կ'առնեմ :

- Մայրիկ, բացատրէ ինձ :
- Հիմա բան մը չեմ կրնար բացատրել քեզ..... Շատ երկար կ'ըլլար.....տուն երթանք ամէն բան կ'ըսեմ, բայց հրաւերն այս երեկոյ ընելու է.....կորսնցնելու վայրկեան մը չկայ . կ'ուզե՞ս թէ չէ :
- Կը տեսնե՞ս մայրիկ՝ թէ զիս կը փութացնես :

— Ձեմ փութացներ : Մերժելը միշտ ձեռքդ է :

- Լաւ ուրեմն :
 - Հինգշաբթի՞, ճա՞շը :
 - Հինգշաբթի ըլլայ :
- Երրորդ և չորրորդ վալսին մէջ տեղ մայրըս արագութեամբ մը հօրս կ'ըսէ .

- Ճաշի հրաւիրէ զինքը :
- Ո՛ր օր :
- Հինգշաբթի :
- Լաւ :

Հայրիկս (երբէք լուրջ հօր մը դերը կատարելը չէի տեսեր) հայրիկս զարմանալի հըլութիւն և համակամութիւն մը ցուցուց : Իրաւ է որ երաժշտութեան բեռան տակ ընկճեալ, ըրածը թողածը լաւ չէր գիտեր : Ես քիչ մը խռոված ալ էի և մտքս կ'ըսէի. «Չելէ սխալմամբ ուրիշ մը հրաւիրէ» : Այդպէս չեղաւ : Շատ վայելչութեամբ կատարեց իւր դոյզն հրաւերն որ մեծ խանդիւ ընդունուեցաւ :

Կէս գիշերուն կը մեկնէինք և Մերսըրէներուն ապարանից բակէն դեռ չելած կ'աղաղակէին :

- Բան մ'ըսե՞մ քեզ մայրիկ . կը մաշիս որ օր առաջ այդ հարսանիքն ըլլայ :
- Ո՛հ, տարակոյս չկայ ասոր :
- Նի՞շտ այդպէս է, ըսէ ինձ :

— Թող քիչ մը շուռն առնեմ, հոգիս բերանս եկած է տունն ամէն բան քեզ կ'ըսեմ :

Ժամ մը վերջ ամէն բան կ'իմանայի : Այսպիսի տարօրինակ պատմութիւն չըլլար : Երէկ առաւօտ ժամը ութին մայրիկս կարթնցընէին և այս փոքրիկ սոմսը կը հասցընէին իրեն՝ շար «Խաչապուշ» տիկին Մէրսըրէի կողմէն .

«Գլուխս կը ցաւի և չեմ կրնար դուրս ելլել : Եկուր . անյապաղ եկուր : Երանիկին երջանկութեան վրայ է խնդիրը» :

Մայրիկս կ'ելէ կ'երթայ :

Բայց «չարն ընդ հուպ» : — Ժամը եօթն է, ճաշելու է :

Թարգմ.

ԼԻԻՏՈՎԻԳ ՀԱԼԵՎԻ

Թ. ԹԵՐԱԶԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՎԻՔԹՈՐ ՀԻԿՈՅ ԻԻՐ ՏԱՆ ՄԷՋ

Մեծահռչակ Քերթոզին 83րդ տարեդարձին առթիւ, Արսէն Հուսէյ «Յեկարօ»-ի վերջին թիւէն միջին մէջ հետեւեալ գեղեցիկ յօդուածը գրած է յորում բաւական ծանօթութիւններ կուտայ Հիւկոյի անձին և առանին կենաց վրայ :

Վիքթոր Հիւկոյ եւս կարող է զրուցել Ֆոնթընէլի նման՝ որ հարիւր տարի ապրեցաւ . «Քանիին՝ իմ դամբանականս պատրաստեցին, այլ ինձմէ առաջ մեկնեցան» :

Վիքթոր Հիւկոյի Ողիմպոսն է իւր ծառուղին («Չէ՛ն») . ուստի և միշտ սա հասցէով կը դրեմ իրեն .

«ԱՌ ՎԻՔԹՈՐ ՀԻԿՈՅ

Ի ՄԱՌՈՒՂԻՆ ԻԻՐ»

Քիչ մարդ կայ որոյ կարելի լինի գրել այս հասցէով : Վիքթոր Հիւկոյ փոքր ասպարան մը կը բնակի որոյ կահկարասիքն ու պարտէզը նշանաւոր են, մանաւանդ պարտէզը, դալարազարդ ընդարձակ ճեմելիք մը ուր երեւակայական աղբիւր մը կը ցայտէ, այլ ուր դեղատեսիլ ծառեր կը ցնցեն իրենց ներդաշնակ ճիւղերը : Ճաշկաւոր կահկարասի մը, ծանրազին ծածկոցներ, և ճաբո-

նական զարդեր՝ որք Լուի Ժ.Գի թուականին ճոխութիւնները կը յիշեցնեն : Այս ամենայն Հօթիլի Հառկի թեթեւ մէկ յիշատակեն միայն :

Վիքթոր Հիւկոյ ծառուղւոյն այս փոքր ապարանքը քերթողին ստացուածքը չէ . Լուսինեան իշխանուհին կառուցած է զայն այնպէս որպէս հարիւր տարի առաջ կը կառուցանէին այդ տեարց եւ տիկնանց բնակարանները : Վարժէ հարիւր հազար Փրանք : Վիքթոր Հիւկոյ որ կը սոսկայ տեղափոխութենէն, նա որ հարկադրեցաւ սակայն անդր քան զՄանչ տեղափոխուիլ, խորհեցաւ դնել զայն իշխանուհիէն՝ որ եօթին հարիւր յիսուն հազար Փրանք պահանջեց :

— Եօթն հարիւր յիսուն հազար Փրանք, կը գոչէ Վիքթոր Հիւկոյ :

— Ոչինչ գին մ'է, կը յարէ իշխանուհին : Քերթողն իւր տանտիրուհին կը դիտէ անքթիթ :

— Ոչինչ գին մը :

— Մտածեցէ՛ք միանգամ, ո՛վ մեծ քերթող, թէ՛ այս փոքր ապարանքը սա անբաղդանելի պատին ունի որ Վիքթոր Հիւկոյի բնակարանն եղած է :

Հիւկոյ կը ժպտի :

— Ապա ուրեմն, տիկին, ես այնքան հաբուստ չեմ որ կարենամ բնակիլ տուն մը որ Վիքթոր Հիւկոյի բնակարանն եղած է :

Եւ ահա այսպէս, « Անան Տերեւներու քերթողն ապարանքին մօտերն, միշտ իւր ծառուղւոյն մէջ, 4-5,000 մեթր տարածութեամբ զարաստան մը գնած է լի գեղեցիկ ծառերով : Հոն է որ պիտի տեսնենք Վիքթոր Հիւկոյ իւր տան մէջ : Ճարտարապետը գործին գլուխն են : Այս կերպով պիտի կանգնին երկու յիշատակարանք՝ արժանի նորա հանձարոյն . մարմարեայ ու քարակիր պալատը՝ մարդուն, նորա ընտանեաց եւ բարեկամաց համար . պղնձեայ պալատն՝ անմահ գործոց համար . « Ալգէյէն Տըպլէր-Քլէն » . այս պիտի լինի չնքին կատարը :

Ութսուն երեք տարեկան է Վիքթոր Հիւկոյ : Շրվրէյլ քսաներորդ դարու սեամին վրայ պիտի սպասէ նա : Հոյակապ պիտի լինի այդ տեսարան . տանեւորները դարու բանաստեղծութիւնն եւ գիտութիւնը ձեռք ձեռքի տուած :

Վիքթոր Հիւկոյ ալ Շրվրէյլի նման չէ վնասած երբէք : Գաղափարաց ճակատամարտին մէջ եւ ո՛չ իսկ մազ մը կորուսած է նա : Կանգուն եւ հաստատ կը մնայ, առ ոչինչ գրեւով տարւոյն եղանակներն ինչպէս եւ արհամարած է կենաց եղանակները :

Գլուխը պսակեալ է սպիտակ հերօք, այլ հրարուս մ'է այն՝ ձեան տակ ծածկուած . ճակատն՝ Ոլիմպոս լեռն է . աչքերը կը վառին հրաչէկ ածուխի նման եւ յօնքերը կը պոստէ հանգոյն Արամազդայ : Նուրբ քիթ մը դողդոջուն ունդերով . բերանն որկորեալ եւ հեղնող, միշտ զինեալ առողջ ակույններով, ի մի բան արդի արուեստից օրինաց համաձայն ուրուագրեալ դէպք մը : Լաւ ձեւուած գլուխ մը՝ յաղթանգամ մարմնոյ մը վրայ :

* *

Վիքթոր Հիւկոյի մոլեսքանչ բարեկամուհեաց գլխաւորն է Տիկին Թոլա Տորիան որ փոքր ինչ Ապոլոնի ընտանիքէն է, եւ Վիքթոր Հիւկոյի բարձր ոճով ոտանաւորներ կը գրէ :

1838 թ. Փարիզի համարձակադոյն դէմքերէն մին է սա, միշտ եղական, միշտ անակնկալ, միշտ հիանալի ոչինչ սոսկում կ'աղդէ նմա . եթէ իւր երիվաք խրտչին, կը ծիծաղի : Նոյն իսկ Հիւկոյ բաւական արիւսաիրտ է որ այսպիսի ծիաւարժի մը կը վըստահի : Օր մը որ Տիկին Թոլա կ'առաջնորդէր Վիքթորին . երիվարք սովորականէն աւելի կատաղութեամբ եւ աշխոյժով կ'սկսին գեհեհեհեհ ծարաւանդ մը սրարել, այլ նա կը սանձէ զանոնք, առանց սակայն կարենալ արդիւլելու խորխոր երիվարն որ չերթայ ակույնները խորտակել լապտերի մը դէմ : Տիկին Թոլա տուն կը վերադարձնէ Վիքթոր Հիւկոյ որ չէ խռոված այս պատահարէն, յետ որոյ ուղղակի ատամնարոյժի մը խանութը կ'երթայ եւ կ'ուզէ անպատճառ խորտակեալ ակույններուն տեղը լեցնել : Վիքթոր Հիւկոյի իւր չնորհագեղ ընկերուհւոյն հետ կառօք ըրած չըջագայութիւնները չեն արգելուր զայն սակայն Փարիզու չորս կողմն չըջագայիլ հանրակառքով . բնականաբար նա որ ատենօք պնդակառաց վերնայարկը կը նստէր, այժմ հանրակառաց վերնայարկը կը նստի :

Երբէք չմտածեր թէ ո՞ւր կ'երթայ. կը սիրէ զՓարիզ իւր քսան արուարձաններու մէջ, աւելի հին Փարիզը քան թէ նոր Փարիզը, աւելի ազքատ Փարիզը քան հարուստ Փարիզը: Չուզեր բնաւ ճանչցուիլ, այլ գրեթէ միշտ իւր քով նստողը կը ճանչնայ նորա գէմքը եւ սքանչանալով այս հանդիպումէն, կողջունէ զայն. ո՞վ որ ալ լինի քովինը, քերթողը միշտ ձեռքը կը կարկառէ մտերմաբար:

Վիքթոր Հիւկոյ բանէ մը չ'վախնար: Մինչ ձիւնը կը ծածկէր զՓարիզ, Տիկին Տօրիան իւր ֆլայմիով եկաւ առնուլ զնա անտառ երթալ շրջադայելու համար. քերթողն առանց հրաւերի սպասելու, կառքը ցատկեց կայտառութեամբ: Լողիկ մը հագած էր երիտասարդի մը նման որ հարսնիքի կ'երթայ:

— Ո՞ւր է կրկնոցնիդ, հարցուց Տիկին Տօրիան:

— Կրկնոցս: Չունիմ եւ չեմ ունեցած երբէք. քաջ գիտէք թէ ամառ ձմեռ այսպէս եմ: Իմ կրկնոցս երիտասարդութիւնս է:

*
* *

Վիքթոր Հիւկոյ առաւօտն արթննալուն իւր լրագրերը կը կարդայ, Բաբէլէն սկսեալ: Այս իւր սիրեցեալ լրագիրն է, վասն զի Վաքըրի իւր մարգարէն է. այլ նա կը կարդայ բոլոր լրագրերն ալ, ճշմարտութեան թըռչուններ որք կ'երթան ճշուրդէլ աշխարհի ամեն կողմերն: Թէպէտ Վիքթոր Հիւկոյ ամենայն ինչ է ինքնին, սակայն կը սիրէ զայս: Միշտ երիտասարդ կ'զգայ զանձն, եւ նորեկները տունէն համարելով՝ կը հիւրընկալէ զանոնք իբր բոլոր սերունդներու անդրանիկ եղբայրն:

Ձերկնչիւր որ մի՛ գուցէ բան մը պակսի իւր գերիշխանութենէն, զի քաջ գիտէ թէ ի՛նչ կը լինին գրական խոստումներն: Հովերու սուրճնն եւ ալեաց շառագիւնն է այն: Կարելի չէ գահընկէց ընել մաքիթադաւորներն, նոյն իսկ գրական յեղափոխութեանց մէջ:

Կ'երթայ ձեմել իւր ծառուղւոյն մէջ, մինչեւ հեռուները. կը խորատուղի Պուլոնէրի անտառին մէջ եւ կը վերադառնայ նախաճաշել, առանց իսկ գիտնալու թէ ո՞ր ճանքով: Սեղան կը նստի ուրախ զուարթ,

գայլի ախաւներով եւ առիւծի ախորժակով: Ապա դուրս կ'ելնէ, աստ անդ կը յածի թափառական, շարաթը մի անգամ Ծերակոյտի ժողովոյն կ'երթայ, եւ տարին երեք անգամ Ակադեմիան՝ անմահի մը ընտրութեան առթիւ: Յաճախ ծայնակցելով Պանվիլի կամ Լըքոնթ տը շիլի՝ կը բողբէ այնպիսի անձանց դէմ՝ զորս ո՛չ հասարակութիւնը կը ճանչնայ եւ ո՛չ ինքն իսկ:

Երբ իւր խուցը կ'առանձնանայ, միշտ աշխատութեան խուցն է այն: Եթէ սկսի աշխատիլ, բանաստեղծութիւնը լիաբուռն կը զեղու իւր կորովի գրչին տակ. այլ ահա յանկարծ կանգ կ'առնու հարցնելով ինքնին թէ ամեն ինչ չ'ըսած, վասն զի չ'ախորժիր գաղափարներն ընդլայնել: Աշխարհ մ'է իւր աշխատութեան խուցն, գաղափարաց աշխարհ: Հաղարաւոր բաներու եւ հաղարաւոր գաղափարներու կը բաղխի անդ մարդս. քանոս մ'է այն, այլ լուսոյ քառոս, գէթ Վիքթոր Հիւկոյի համար: Հոն է իւր դանձը:

Ո՞րն է իւր գանձը: Չեմ ուզեր խօսիլ իւր հարստութեան վրայ, այլ իւր վառաց տաղտոսներուն վրայ. ինքն իսկ լաւ չ'գիտեր թէ ո՞ւր գրած է առաջինն, այլ երկրորդները պահած ու կնքած է երկաթեայ սընտուկի մը մէջ, իւր ննջարանի պատին մէջ թաղուած, առքնիթեր իւր սիւնաղարդ անկողնոյն:

Այդ երկաթեայ դարանին մէջ են իւր բոլոր ձեռագրերն, առաջինէն մինչեւ վերջինն, զորս իւր կտակով — իւր կտակին, ահա՛ մի այլ ձեռագիր որ մեծ աղմուկ պիտի յարուցանէ օրին մէկը — թողած է Ազդային Մատենադարանին: Միթէ գանձ մը չ'է՞ այս ամենը:

Տան տիրուհին հիանալի ողորմաբաշխ մ'է վարպետին համար, ինչպէս եւ թանգարանապետն լաւ գիւսանապետ մը, Ռիշար Լէքլիէ որ պիտի կրնար այս փոքրիկ «Նոթը-Տամ-Փարիզի» Քուստիմոտոն լինել, եթէ չ'ինչէր յաղթանգամ երիտասարդ մը, զըւարճախօս եւ խորամանկ:

*
* *

Ժամն եօթ ու կէսն է գիշերուան. դուրսը տեղատարափ կ'անձրեւէ եւ հրաւիրեալը կը հասնին հետզհետէ. քանի մը մանկատարդ

տիկնայք կը խօսին տիկին Լոբրուայի եւ քանի մ'երիտասարդք Վիքթոր Հիւկոյի հետ : Տօնական երեւոյթ մ'դգեցած է սրահն : Դրանց վարագոյրներէն կը նշմարուին ճաշասրահին փաւրակներն ու բլւերեղներն : Ներս կը մտնէ Շէոլէր « Յթէ Աստուած մ'ըլլար՝ թոյլ պիտի տա՞ր որ այսպէս թրջուէի » կ'ըսէ անձրեւի կաթիլները թոթովելով : Վիքթոր Հիւկոյ կը պատասխանէ նմա . « Յթէ Աստուած չըլլար , միթէ պիտի գտնայի՞ք այսպէս լաւ կրակ մը » :

Արդարեւ կրակարանը կ'սփռուի զսմենքն , մինչեւ խիլ զՇէոլէր , այդ ատտիկեան անաստուածն :

Կը մտնէ Հանրի տը Լաբրըթէլ , որ աճապարելով կ'ուզէ երթալ ողջունել զՎիքթոր Հիւկոյ , և ձեղունէն կախուած ջահին կը զարնուի :

— Ահա ի՞նչ բան է մեծ լինելը , կ'ըսէ տիկին մը որ մեծարանքը կը սիրէ :

— Մեծ չեմ , տիկին , կը պատասխանէ երիտասարդն , այլ բարձրահասակ :

— Ըսէ՛ք , Պ Լաբրըթէլ , եթէ պայծառ գիշեր մը լուսնկային հանգիսիք , պէտք է զգուշանայ նա , այնպէս չէ՞ :

— Ո՛հ , այո՛ , կը յարէ Լաբրըթէլ ժպտելով , բայց երբ լուսնին տակէն անցնիմ , դըլխարկս կը հանեմ՝ ճակատս չ'զարնելու համար :

Կուգան իմաց տալ Հիւկոյի թէ սեղանը պատրաստ է : Յայնժամ ոտքի կ'ելնէ , տիկնոջ մը ձեռքէն կը բռնէ , համբոյր մը կը դրոշմէ անդ , և թեւն առնելով առաջ կ'անցնի երիտասարդական աշխուժիւ և շնորհօք : Միշտ տաան երկու հրաւիրեալք կան : Իրաւ է թէ արդէն տան տէրն , Լոբրուա եւ տիկին Լոբրուա , Հիւկոյի թոռներն՝ Շարլը Հիւկոյի որդին եւ աղջիկը գրեթէ սեղանին կէսը գրաւած են : Վիքթոր Հիւկոյ սեղանին մէկ ծայրը կը նստի ըսելով թէ բոլոր պատուոյ տեղերն իւր բարեկամաց կ'ուզէ թողուլ : Այլ ճշմարիտն այն է թէ ամենէն փառաւոր տեղն իւրն է , եւ նա լաւ կը բազմի այդ տեղ իւր ծերունի աղնուականի շնորհօք եւ լեռնականի ախորժանօք : Գովիններուն հետ կը քննաբանէ , աջ ու ձախ հրաւիրելոց սիրուն խօսք մ'ուղղելով :

Ընդհանրապէս ուրբաթ օրերը սեղանաւից կը լինիմ Վիքթոր Հիւկոյի հրաւիրելոց ,

երեսօրվաաններու եւ ծերակոյտի անդամոց , Պ . եւ տիկին Լոբրուայի , Պ . եւ տիկին Հուսէյի , փոքրիկն Հիւկոյի որ ամեն բան գիտէ եւ իւր պապուն նման լաւ կը նկարէ , Օր . Հիւկոյի , վասն զի արդէն խիլ օրիորդ մ'է նա այժմ : Չմոռնանք դրադարանապետ-դիւանատեան որ բազմամարտ թղթակցութիւններն աչքէ անցունելէ յետոյ , կուգայ այս հիւրընկալ սեղանին խորտիկներն ու գինիները ճաշակել : Գոգցես զուտ բարեկամական ճաշ մ'է այն , այնքան մտերմութիւն կը տիրէ սեղանին վրայ : Եւ սակայն գաղափարի ճակատամարտը կան անդ , այլ քաղաքավարական զէնքերով կը պատերազմին : Իրաւ է թէ ամեն սրտի խոր միակ կարծիք մը կայ . բարութիւն :

Քանի՛ քանի՛ հրաւիրեալք , աւա՛ղ , այլ եւս չկան այս սեղանին վրայ ուր այնքան երիտասարդ բազմեցայ առաջին անգամ : Երկու կին , երկու մանչ և երկու աղջիկ : Որքա՛ն երիտասարդութիւնք հնձուած են անոր սրտէն որ հարիւր տարի պիտի ապրի : Հապա բարեկամներն : Ո՛րքան ստուերը կը ծածանին որք դիւցազնական բարեկամութեան մը յիշատակն ի յուշ կ'ածեն քերթողին Ասոնց վերջինն , Սէն-Վիքթոր , անհուն դրուատիք կը ներշնչէր այնմ զոր այնքան պերճախօսութեամբ փառաւորեց , այսու ինքն խիլ փառաւորուելով :

*
* * *

Վիքթոր Հիւկոյ չկատկածիր որ իւր բարեկամները չպիտի գտնէ միւս կենաց մէջ :

Մեծ քերթողն համոզուած է թէ ինք միշտ ապրած է անդրձեղնեղեան ժամանակաց հետէ յորում Արարիչն աշխարհ բերեր է զինքն : Կը հաւատայ թէ պիտի ապրի ամեն ժամանակ , այնքան կ'զգայ թէ հազարաւոր երգեր , քերթուածներ ու պոեմներ կան դեռ իւր հոգւոյն մէջ զորս դեռ չէ գրած : Սրբ անաստուածք կ'ըսեն իրեն « Ապագային չապրելնուդ ապացոյցն այն է որ անցելոյն մէջ չէք ապրած . ի զուր անցելոյն մէջ կը փնտռէք դուք դձեղ » , Վիքթոր Հիւկոյ կը պատասխանէ « Ո՛վ կ'ըսէ թէ դանձա չեմ գտներ անցեալ դարերուն մէջ : Պիտի ըսէք թէ դարերու հրաշապատում մ'է : Շէյքսպիր գրած է . — Կեանքը դիւթական հրաշալիք մ'է զոր երկրորդ ան-

գամ կը գրենք » : Կրնար գրել հաղարեր-
րորդ անգամն : Չկայ մի դար յորում չտես-
նեմ իմ ստուերիս անցնիլը : Դուք չէք հա-
ւատար ողջ մնացող անձնաւորութեանց ,
պատրուակելով թէ ոչինչ կը յիշէք ձեր անց-
եալ կեանքէն , այլ սակայն անցած դացած
դարերու յիշատակն ինչպէս պիտի տպա-
ւորուի ձեր մտաց մէջ , երբ չէք յիշեր ձեր
ներկայ կենաց հաղարումէկ տեսարաններն :
1082 էն ի վեր տաան Վիքթոր Հիւկոյ կայ
յիս . միթէ կը կարծէք թէ կը յիշե՞մ ես
անոնց բոլոր գործերն եւ գաղափարները :
Միտն է գերեզմանն , եւ երբ գերեզմանէն
անցնիմ մի ուրիշ լոյս դառնելու համար , բոլոր
այս Վիքթոր Հիւկոյները օտարական պիտի
թուին ինձ , այլ հոգին միշտ նոյն պիտի
մնայ » :

Վիքթոր Հիւկոյ նախապատմական հան-
ճար մ'է . ուստի եւ բոլոր թուականներու
տիպարն յինքն կը կրէ : Անհնար է մէկ թը-
ւականի մէջ փակել դայն . միշտ իւր ժա-
մանակի մարդը կը կարծէ ինքզինքն , այլ
իւր ժամանակը սահման չունի : Այս պատ-
ճառաւ ահա դէպի 1902 միևնոյն դամբանա-
կանը պիտի խօսուի Հոբերտ , Եսթէ , Տան-
թէ , Շեքսպէր , Մալերի և Հիւկոյ :

Պ. Վիէննէ որ չարածճի ծնած է , հար-
ցոյց մի օր Վիքթոր Հիւկոյի թէ ո՞վ էր իւր
ժամանակին ամենէն մեծ քերթողը . Վիք-
թոր Հիւկոյ որ կրկին անգամ չարածճի ծը-
նած է , պատասխանեց . « Երկրորդն Ալֆ-
րէտ տը Միւսէն է » :

*
* *

Կաղնին ծառերու թագաւորն է : Բոլոր
ծառոց մէջէն գետնի հաւասար կը բուսնի
այն , իւր սերմն առնելով ագռաւէն որ բը-
նութեան օրինաց կը հնազանդի : Ազատ
լուսոյ մէջ արմատ կը ձգէ : Արպիտի առաքի-
նութիւն կենաց . աւազն ալ օգտակար է
նմա բուսահողի նման : Այլ ի՞նչպէս պի-
տի ուռճանայ անտառին մէջ , հաղարաւոր
ծառատնկոց տակէն որք զիրար կ'ընկճեն :
Առանց յարգելու այն առժամեայ հովանին
որ կը պատսպարէ դայն փոթորկաց և հող-
մոց դէմ , քիչ յետոյ ամբողջ երկրին հիւթը
և՛ առողջ օդ կը ծծէ , իւր հոգիւն թեւե-
րը կը տարածէ , կ'ընկճէ ծառատունկերն ,
և կը հարուածէ մինչեւ իսկ մեծ ծառերն

իրենց վեհութեան մէջ : Բոլոր հինաւորաց
ծառերը կը տապալին իւր շուրջ : Եւ այս
պիտի տեսէ մէկ դար , մինչեւ որ փայտա-
հարը դայ դարնել դայն իւր սրբապիղծ տա-
պարաւ : Մինչեւ վերջին օրը , կանգուն կը
պահէ նա իւր ալեւոր և փառապանծ գլու-
խը : Դալար ոստերն ծիրանի և ոսկեգոյն
ոստերու փոխարկուած են , և գեռ ապաս-
տանարան մը կ'ընծայեն , երգող թռչնոց սի-
րելի :

Կաղնին Վիքթոր Հիւկոն է :

ԱՌՍԷՆ ՀՈՒՍԷՑ

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

1885 Ի ՉՄԵՌՆ Ի ՍՊԱՆԻԱ

Թէեւ ալեւոր Չմեռն այնքան մեղմութեամբ
անցաւ այս տարի Պոլոյ փրայէն , և դար-
նան անուշահոտ բուրումները կ'զգանք ար-
դէն՝ առանց ձմրան սաստկութիւնները կը-
րելու , սակայն կրնանք ըսել թէ այնքան հաշտ
աջօք վարուած չէ նա ամեն երկիրներու
հետ : Օրինակի համար , ի Սպանիա անցեալ
յունուար ամսոյ մէջ տիրած սոսկալի ցուր-
տին նմանը գտնելու համար պէտք է մինչև
1829 տարին ելնել : Այսպէս , ի Պրիհիւէկա ,
Մատրիտէն 33 հաղարամեթր հեռու , բա-
րեխառնութիւնը դէրօէն 14 աստիճան վար
էր միշտ . ի Բալէնչիա , Մատրիտէն 190 հա-
ղարամեթր հեռու , ջերմաչափն յունուար
19ին դէրօէն 19 աստիճան վար իջած է :
Գարրիոն գետակն եւ ջրանցն սառած
էին և սառոյցն 30-40 հարիւրորդամեթր
թանձրութիւն ունէր : Ի Մոլինա (Արակոն) ,
ցուրտն եւս աւելի սաստիկ էր . ամսոյն 16
ին՝ ջերմաչափը մինչեւ դէրօէն 28 աստիճան
վար ցոյց կուտար , 17 ին՝ 23 աստիճան ,
19 ին՝ 20 աստիճան . հացը քարացած էր ,
և ալքօօլն իսկ կը սառէր սրուակներուն մէջ :
Տանց ապակիներուն ներքնակողմը , սառոյ-
ցի կեղեւն մինչեւ 10-15 հաղարերրորդա-
մեթր թանձրութիւն ունէր : Ի Պիւրկոս ,
ամսոյն 20 ին՝ դէրօէն մինչեւ 23 աստիճան
վար ցոյցաւ կար : Ի Սէնովիա , ուր բարե-

խառնութիւնը սովորաբար յոյժ մեղմ է, 17 ին դէրօէն 13 աստիճան վար ցուրտ կը տիրէր : յԱպրիլէն, 16ին ջերմաչափը գերօյէն 23 աստիճան վար կը նշանակէր :

Այս արտասովոր ձմեռն արդիւնքն այն եղաւ որ ցուրտը մեծ կոտորած ըրաւ մանկանց ու երախայից մէջ : Հարստանիլին, փողացաւութիւնն և եռացական ջերմերն անթիւ զոհեր ըրին : Ամեն օր, Մատրիտի մէջ ամեն քայլափոխիդ դէմդ կ'ենէին այն փոքրիկ կառքերն, ճերմակ ներկուած, կապոյտ ու կարմիր վարագոյրներով, որք մանկութեան դադարն են : Սպանիոյ մէջ ժողովրդական առասպել մը կայ որ կ'ըսէ թէ՛ մեռնող իւրաքանչիւր մանուկ երկնից մէջ բաւական ոտնաչափ դետին կը դրաւէ իւր հօրն ու մօրը համար : Բայց ո՞րն է այն մայրն որ ուղէ բովանդակ երկինքն ունենալ այս գնով : Ուստի, ամեն կողմն կը տեսնուին արտասովոր մայրեր :

Մանկանց խնամատար Ընկերութիւնն մեծ եռանդ ցոյց տուած է եւ մեծ ձգեր ըրած, բայց իւր ապաւինատունք անբաւական էին պատասխարելու համար այն խեղճ երախայներն, գործ իրենց մայրերը կը բերէին՝ ցուրտի դէմ ապաստան մը գտնելու համար :

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹԻ

Խ Ո Ւ Լ Թ Ի Կ Գ Ի Ի Ղ

Այս անգամ կը հրատարակենք աշխատութիւն մ'որ մանրամասնօրէն կը նշանակէ Բաղէշի Խուլիկի դիւղի ազդայնոց սովորութիւններն իրենց առօրեայ սովորական կենաց մէջ : Սովորութիւններն ժողովրդական մը բարոյական և մտային կեանքը կը ներկայացնեն և անոր յայտարարն են : Այս տեսակէտէն նայելով, կը կարծենք թէ ընթերցողը հաճութեամբ պիտի կարդան այս և նմանօրինակ յօդուածներ գաւառական սովորոյթից վրայ : Ինչ որ սովորութիւն կը կոչենք մենք, Խուլիկիցը օրէնք կը ճանչեն : «Տգիտութիւնն կարծողնէ կ'արտագրէ և սովորութիւնը վարդապետութեան կը վերածէ դանտեր :

Ա.

ՄԵՌՆԵՐ ԵՒ ՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Խուլիկիցի կիներն մըջուռնի վրայ կը միգն, որ ամիլին. թրի խարտուք, ժանգ, բովքի փոշի, ջրիկ պճիղ ևն. կ'ուտեն որ բուժին ամուլութիւնը. աղաբերքի այսպիսի ուժագեղ մը մօտեքս վճուկով տուաւ իր ծուխին ու սպաննեց զայն :

Յգութեան օրերու մէջ աղիկատ չ'են մաներ. եթէ անտես մէկն այս օրէնքը, կըսեն թէ կշտացաւ կ'ենթարկէ իր տղեկն ծնած տղեկի պօրտը կը կտրեն և փերեցակի մը քուրձի մէջ կը ձգեն, որ բախտաւորի տղան. եթէ էգ է՝ մօր առջևի կողմը կը դնեն, ու յետին. եթէ որձ է՝ ետեւի կողմը կը դնեն, որ առջէ իր սեռը : Տղեկն իր դերքը կը պահէ, մինչեւ որ առջի անգամ ճէ՛. այն ատեն կը ծծեցնեն ու ետեւի ու առջևի բժժանքը կը վերջանայ : Հիմա հօր շալակը կը դնեն տղեկն ու կը թողաւորեն, որ տուն մտնէ հայրն. եթէ շալակելու թափօրը չ'ըրած տուն մտնէ հայրն, տղեկը «կը կոխէ», կ'ընդօտէ, կ'ըսեն, տղայի առողջութիւնը. այն ատեն հօր թեւերու կամ «մօր գլխի վրայ կը դնեն ու կը լուան տղեկն : Եթէ տղաբերի դրան առջեւէն նորհարս փեսայ մը, տղաբեր կամ մեռել մը անցնի, տղեկը «կը կոխուի» : Այս պարագային տղեկի լուացաջուրը ծածուկէն մեռելի գերեզմանի, տղաբերի կամ փեսայի տանիքը կը լեցնեն. երբեք տղահայրն կը միգէ փեսատան ծխին, ու երկու տղամայրերն փոփոխաբար կը ծծեցնեն իրենց տղեկներն : Կնուքէն առաջ կամ ետ ականջները կը ծակեն, եթէ էգ է քիթի ալ. երբ որձ տղեկը շատ սիրեն, անոր քիթն ալ կը ծակեն ու շատ մը ոսկերիչներէ արծաթ ժողովելով «խէմ» — քիթագինտ մը շինել կուտան ու անոր քիթը կ'անցընեն. այս ժողովադրամի մէջն է Բենիամինի ազգերու հմայն : Կնուքի ատեն 1 1/2 մէթր սաւան մը կը ձգէ քովորն իր սանիկի վրայ, գուցէ քովոր-միջի ընծայն է ստիկա. սանամայրն դաթայ ու «սոր — կուսի ճաշ» կը զրկէ քավորին. դրացիներն ալ կը համոտեն այս ագապը երբ կ'ուռնէն գտունայ, վառուն մանրով կը դիմա տրեն սանիկն ու մնողի վրայ կը դնեն. հիմա գետնի վրայ կը դնեն. «Եթէ մաղի վրայ դնենք, շատ ծաղիկ կը հանէ» կ'ըսեն : Բարեկամութիւնն կ'այցելեն հիմա տղաբերն ու ստուկ ու ուտելիք կը բերեն. տղաբերն կը կերակրէ ու միգ տալով կը ծամբէ իւր այցելութիւններն : Վառսուռնէն երկու արշալուսն աղբիւր կ'երթայ. կը լուացուի մայրն. հաց մը կը թջրէ հոն կը դնէ, որ շատնայ իր կաթը. սոխ մ'ալ կը դնէ հացի վրայ, որ զ'աչքիլի : Եթէ հօր տունն ծներ է կինն, հաց ու ճաշ կ'առնեն խնամիտունն կ'երթան կեսրանք ու իրենց տունը կը բերեն տղեկն ու մայրն. օրորոց ու իր սարքը հարսի ներանք կուտան իրենց թոռիկն :

Երբ առամ հանէ, սաւանի մը վրայ կը նստեցընեն մանիկին. մի կողմն սանտր մը կը դնեն, միւս կողմը դանակ մը. եթէ սանտրը վեր առնէ տղան, աղջիկ մը. եթէ դանակը վեր առնէ, տղայ մը կը օրէրէ մայրն» կ'ըսեն. այս կայարդանքի ատեն մեծ — կին մը չամիչ, սիսեռ կամ ցորենահատ կը լեցնէ երախայի գլխու վրայ, ու մանր տղաքներ մէկգմէկ ծծեցնելով գանոնք կը ժողվին. «սկաւորիկ» կ'ըսեն անոր Խուլիկիցիներն :

Յ. ՏՈՒՏՈՒԹԵԱՆ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Յ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

15-22 ՓԵՏՐՈՒՄ 1885

Ս Ր Տ Ս Ք Ի Ն

Լոնտրայի լրագիրը մեծ կարեւորութիւն կ'ընծայեն Աֆղանստանի կացութեան : Ընդհանուր հաւանութեան արժանացաւ երեկ երեկոյ Լորտ Կրանվիլի ըրած այն յայտարարութիւնը թէ Անգլիա որոշած է թոյլ չտալ Ռուսիոյ դէպ յառաջ շարժում մ'ընել Հէրաթի վրայ : Լորտ Կրանվիլ հաստատեց Լորտերու ժողովին մէջ թէ ռուսական զօրքերը կը գրաւեն այժմ Զիւլֆիքարի կիրճն և թէ անոնց յառաջապահներն Բէնճէէն երկու մղոն հեռու կը գտնուին : Յարեց թէ անգլիական կառավարութիւնն ազդու դիտողութիւններ ըրած է ի Բեյրութի վրայ : Կառավարութիւնն որ այսուհետև ու է յառաջխաղացութիւն արդելու :

Ռուսական կառավարութեան ընդունուած վերջին ծանուցադիրն յետքուար 24 թուականը կը կրէ : Պ. տը Կիրս կը հաստատէ թէ ռուսական կառավարութիւնը չկըրնար ելք տալ Անգլիոյ այն խնդրոյն թէ Ռուսիա ետ քաշէ իւր յառաջապահներն Սարիք-ժաղիէն և Զիւլֆիքարէն . սակայն Պ. Կիրս ապահովութիւն տուած է թէ ռուս սպայներն հրաման ընդունած են զգուշանալ ու է կուէ աֆղան զօրաց հետ :

Աֆղանստանի սահմանադրութիւնը գծող յանձնարարին անգլիացի անդամ Սըր Բէյէր Լըմստըն զօրավարն խորհուրդ տուած է Աֆղանաց սաստիկ դիմադրութիւն մ'ընել այսուհետև Ռուսաց ու է յառաջխաղացութեան : Լորտ Կրանվիլ հաստատած է թէ անգլիական կառավարութիւնն այս մասին հաւանութիւն կուտայ սլատուիրակին ընթացքին :

Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ բանակցութիւնը կը շարունակին և հանրային կարծիքն յոյժ զբաղեալ է աֆղանեան խնդրովն :

— Անգլիոյ Լորտերու ժողովն 68 ի դէմ 188 ձայնիւ քուէարկեց նախարարութեան արտաքին աշխարհավարութիւնը պարսաւող առաջարկ մը :

Երեսփոխանական ժողովն, 288 ի դէմ 302 ձայնիւ մերժեց Սըր Ս. Նորթբրոքի պարսաւանաց առաջարկն ընդդէմ նախարարութեան արտաքին աշխարհավարութեան :

Հաւանական է էր Խորհրդարանը լուծուի՝ Երեսփոխանական աթոռոց վերաբաշխման ծրագրին ընդունելութենէն յետոյ :

— Կ. Կլատտիսի նախարարութիւնն յաղթական դուրս ելաւ այն վիճաբանութենէն որ տեղի ունեցաւ Երեսփոխանական ժողովոյ մէջ՝ ի մասին իւր արտաքին աշխարհավարութեան : Ընդդիմադիր կուսակցութեան առաջարկած պարսաւանաց քուէն մերժուեցաւ 288 ի դէմ 302 ձայնիւ : Իսկ Լորտերու ժողովն ընդունեց զայն 68 ի դէմ 189 ձայնիւ : Լորտերու քուէն չդաշիր նախարարութեան կացութեան :

— Եւրոպական հեռագրեր կը ծանուցանեն թէ Նէմէնի կուսակալ Էյուպ փաշա Կ. Պոլսէ նոր զօրաց առաքումը խնդրել հարկ դատած է, Շէրէֆ-Էտտին անուն Շէյխին ինչ ինչ շարժումներն արդիւնէր նպատակաւ :

— Զանգիլարի Սուլթանն անգլիացի ուղեւորի մը միջոցաւ հրատարակել տուած է Թաշքէնի մէջ թէ անհիմն է լրագրաց ոմանց այն լուրը թէ Զանգիլարի Սուլթանը գերմանական կառավարութեան խնդրեր է հաստատել իւր հովանաւորութիւն ի վերայ Զանգիլարի :

— Իտալիոյ արտաքին գործոց նախարար Պ. Մանչինի յայտարարած է՝ Երեսփոխանաց թէ ինք իսկ պիտի խնդրէ վիճաբանութիւն մը իւր արտաքին աշխարհավարութեան վրայ, երբ անգլիական Խորհրդարանը վերջացնէ Սըր Ս. Նորթբրոքի առաջարկին վիճաբանութիւնն համանման խնդրոյն վրայ : — Հռոմի թերթեր կը ծանուցանեն թէ Իտալիական կառավարութիւնն յայտարարած է Ֆրանսական կառավարութեան թէ Իտալական առաքմանց կէտ նպատակին Տրիպոլիս չէ բնաւ : — Զորքորդ անդամ լինելով, կառավարութիւնն 2,000 զօրք եւս ձամբայ կը հանէ :

— Ռիւդէրի գործակալութիւնը կը հեռագրէ Վիէննայէ թէ, «Կ. Պոլսէ տրուած լրոց նայելով», ռուս կառավարութիւնը կը խորհի օգուտ քաղել Եւրոպիոյ արդի վիճակէն, Բ. Դունէն խնդրելով ինչ ինչ փոփո-

խումբներ Գարդանելի նաւարկութեան վերաբերեալ կանոնաց մէջ, և Օսմանեան Կայսերական կառավարութեան ներկայացնելով նաեւ ուրիշ խնդիրներ տարբեր նիւթերու վրայ :

— Լոնտոնի Լորտ Քաղաքապետին նախաձեռնութեամբ, հանգանակութիւն մը բացուեցաւ, որոյ արդիւնքը պիտի դործածուի ազգային յիշատակարան մը կանգնելու յանուն Կորտոն զօրավարի, գնտաւահար սպանեալ մատնութեամբ նոյն քաղաքի մէջ զոր տարի մը՝ պաշտպանեց քաջապէս :

(Մ. Օրինակաւ)

— Միացեալ Նահանգաց, ինչպէս արդի Նախագահ Պ Արթուր, ապագայ Նախագահ Պ. Քլիվլէնտ եւս յայտարարած է թէ հարկ է նուազեցնել արծաթ դրամ կորէն, ապա թէ ոչ՝ ոսկւոյն և արծաթին միջեւ համեմատութիւնը բոլորովին խանգարելով՝ զրամական տաղնապ մը կրնայ ծագիլ :

Պ. Քլիվլէնտ արդէն որոշած է իւր ապագայ Նախարարութեան գլխաւոր անդամները :

— Ուաշինկթոնի ազգային յիշատակարանին նաւակատեաց արարողութիւնը կատարեցաւ Ուաշինկթոն քաղաքին մէջ ամսոյս 9/21 ին : Խուռն բազմութիւն ներկայ էր : Յիշատակարանն ունի 555 ոտք բարձրութիւն և 1,100,000 տոլար ծախքով անգնուած է, որոյ 990,000 տոլարը տուած է կեդրոնական կառավարութիւնը : Շէնք մ'է աշտարակի ձեւով, քանի մը մղոն հեռիէն տեսանելի, և գերազանց քան զԿապիտոլն չըռումայ : Յիշատակարանին գագաթը կ'եննուի ներքին սանդուխով մը կամ վերամարձով մը :

— Պ. Կլատտոն զանազան առիթներով ալ նիւթապէս արտայայտած է այն համարումը զոր կը տածէ Պալատն առ թերակղզւոյն ժողովրդոց : Այս օրերս, Անգլիոյ Ազատականաց մեծանուն Պետր Սերպիոյ Ազգային Գրատան նուիրեց 565 հատոր պատմական և գիւնանագիտական գիրքեր, որոց համար կ'ըսուի թէ մեծ արժէք ունին : Գրատան տնօրէն Պ. Տիւրիչ այս նուէրի համար հրապարակաւ և ջերմապէս շնորհակալութիւն յայտնեց առ Պ. Կլատտոն :

— Վերջորիւ թագուհին ինքնուրիշ նաւակ մը զրկեց առ Օրիւորդ Կորտոն (քոյր

զօրավարին,) ջերմ համակրանք և վշտակցութիւն յայտնելով Կորտոն զօրավարին ընտանեաց, այն դառն կորստեան առթիւ զոր ըրին սպանմամբ քաջ և անձնուէր զօրավարին :

(Խորքն Լիւքսէն)

— Պերնի նահանգին Վոհլէն քաղաքին աղքատաց ապաստանարանն հրոյ ճարակ եղաւ ձեւամբ սպտապարեւոյ միւրջն, որ խուլհամր մ'էր և կրակ տուաւ չէնքին, չգիտցուիր ինչ պատճառաւ . 120 պատապարսպութիւն կային, որոցմէ 5 ին զիւղներն արդէն գտնուած են, և ուրիշ մի քանիներ երեւան չէին ելած դեռ :

Ն Ե Ր Ք Ի Ն

Սեւանիկի կուսակալ Ղալիպ փաշա օսմանեան Արշիպիլագոսի կղզեաց կուսակալ անուանեցաւ եւ Արշիպիլագոսի կուսակալ Հազդը փաշա Սեւանիկ կոչուեցաւ նոյն պաշտօնով :

— Աթէնքի ռուսմանական դեսպան Պ. Կիբո Պոլոյ դեսպան անուանեցաւ փոխանակ Պ. Մալրօսէնիի :

— Իսթէրն-Էքսպրէս Անկոյ-Փրանսական թերթն վերստին հրատարակուիլ սկսաւ :

— Եգիպտոսի Խալիվ Միրիմիրանութեան աստիճանաւ Փաշայութեան տիպոս շնորհեց է Վսեմ Նուսր փաշայի որդւոյն Պօղոս պէյի որ Նեզմի ուղղման Ընկերութեան տնօրէնն է ի Պէհէրա, եւ երկրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան՝ Վսեմ Թագւոր փաշա Յակոբեանի :

— Թէրճիմանը-Հաղիպթ լրագիրն որ միամսեայ դադարման դատապարտուած էր, կայսերական ներման արժանանալով, սկսաւ հրատարակուիլ :

— Աղբիւնուպոլէն հետեւեալը կը գըրեն մեզ :

« Տեղւոյս քաղաքապետութեան անդամոց կէսին՝ հանդերձ նախագահով վերընտրութիւնը կատարուելով, Նախագահ Բախր պէյ վերստին ընտրուեցաւ 1500 քուէարկուաց 1582ին քուէովն, որը հետեւեալ կերպիւ կը բաժնուին . Իսլամը 422, Յոյնը 655, Հայը 177, Հրեայը 150 :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Մայրաքաղաքիս ուսանող Գեորգիանու-
տան թորգմաններէն Նելրուզեան Յարե-
թիկ էֆէնտի Պատրիարքական Տեղապահ
Գեր. Հօր ներկայանալով, մտաոյց էջմիած-
նի Ս. Սինոդին մի սալտօնագիրն, որով կը
ծանուցուի թէ Կաթողիկոսական ընտրու-
թիւնը պիտի կատարի ապրիլ 17 ին, և թէ
ինք (Տեղապահ Հայրն), իրրեւ Փոխանորդ
Թեմակալ Առջնորդին Կ. Պոլսոյ, կա՛մ առ-
ձամբ սլարտի մասնակցիլ ընտրութեան՝ աչ-
խարհական պատգամաւորի մը հետ, կա՛մ
երկու անձեր՝ մին եկեղեցական և միւսն աչ-
խարհական՝ սլարտի նշանակել իրրեւ ներ-
կայացուցիչ Կ. Պոլսոյ թեմին, և կա՛մ իւր
և աշխարհական պատգամաւորին քուէն
սկսեալ է զրկէ էջմիածին, եթէ չուզէ առ-
ձամբ երթալ կա՛մ ներկայացուցիչ նշանակել:

Նէվրուզեան էֆէնտի ծանոյց թէ միւս
հրաւիրագրերն ալ ուղղակի գաւառային Ա.
առջնորդաց զրկուած են ձեռամբ ուստական
հիւստիտոսաց:

Նմանօրինակ հրաւիրագիր ո՛րալ Նել-
րուզեան էֆէնտի յանձնեց Երուսաղէմի Ս.
Պատրիարքին:

Կը յիշուի թէ անցեալ տարի Թուրքիոյ
գաւառային Առջնորդաց ուղղեալ հրաւի-
րագրերն իրենց հասցէին զրկուելու համար՝
ամբողջովին յանձնուած էին հոգեւոյս Ս.
Պատրիարքին: Բայց ուստ կառավարութիւնը
տեսնելով թէ Առջնորդաց հրաւիրագրերը
չէին զրկուած յայնժամ և Կ. Պոլսոյ Ազգ.
Ժողովն ի գիտաց նոյա մասնակցած էր ընտ-
րութեան, այս անգամ ուղղակի գաւառ-
ները զրկած է հրաւիրագրերն, որպէս զի
Կ. Պոլսի իրրեւ սլարդ թեմ մը միայն մաս-
նակցի կաթողիկոսական ընտրութեան:

— Հետզհետէ Պաղտատէն հեռացրեր կը
հասնին ի Պատրիարքարան, որք կը ծանու-
ցանեն թէ տեղւոյն Առջնորդական Տեղա-
պահ Նաճարեան Փիլիսոպոս եպիսկոպոսի
և Տ. Մեսրոպ քահանայի միջեւ գծաւթիւն
ծագեր, ժողովուրդը կուսակցութեանց
բաժնուեր, և եկեղեցին փակուելով բանա-
լինքը կառավարութեան յանձնուեր են:

Պատրիարքական Գեր. Տեղապահն որո-
շեց որ յառաջիկայ չորեքշաբթի Խառն Ժո-

ղով գումարի այս ստիպողական խնդիրը նը-
կատուութեան տանելու համար:

— Կրօնական Ժողովն իւր յառաջիկայ
նստին մէջ նկատուութեան պիտի առնու
առաջնորդական ընտրելաց ընդհանուր
ցանկը և ընտրանօք պիտի նշանակէ թէ այս
կամ այն եկեղեցականը ո՛ր գաւառաց ա-
ռաջնորդութեան կոչուելու յարմարութիւն
ունին: Միանգամայն պիտի գրէ վանա-
հարց որ իրենց վանուց մէջ գտնուած ա-
ռաջնորդաց եկեղեցականաց ցուցակն յղեն
ի Պատրիարքարան:

— Կրօնական Ժողովն իւր այս երկուշաբ-
թի առաւր նստին մէջ նկատուութեան առաւ
էջմիածնի Կաթողիկոսական Տեղակալ Ամեն.
Մակար Ս. Արքեպիսկոպոսի մի գիրն ի պա-
տախանի Ազգ. Վարչութեան այն սալ-
տօնագրոյն, որ կը վերաբերէր Ասորպատա-
կանի Գարատաղ գաւառակի Հայոց կոտո-
րածին: Մակար Արքազան կը ծանուցանէ
թէ Ազգ. Վարչութեան խնդրանաց համա-
ձայն յանձնարարած է Ս. Սինոդին որ Վեհ.
Շահին գթութիւնն հայցելու համար հարկ
եղած դիմումն ընէ յանուն համայն Հայոց
Ազգի:

— Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Եսայի
Արքազան այս հինգշաբթի օր մեկնեցաւ
Կ. Պոլսէն:

— Ազգ. Ժողովն գումարեցաւ այս ուր-
աթ, օրակարգ ունենալով Կաթողիկոսա-
կան խնդիրն և հետեւեալ որոշումներն քը-
ւէտրիկց:

1. Թուրքիոյ Հայոց Ազգ. Ժողովն պիտի
մասնակցի Կաթողիկոսական ընտրութեան:

2. Նկատելով որ էջմիածնայ Սինոդէն
եկած թուղթն այնպիսի ճանրակիւ կէտեր
կը սլարուենակէ որք անմիջական տնօրէնու-
թեան կը կարօտին, կ'որոշէ յղել Սինոդի
գիրն առ Վարչութիւնն յանձնարարելով որ
գաւառաց ուղղակի մասնակցութեան հրա-
ւերին նկատմամբ հարկ դատած օրինական
հրահանգը տայ անմիջապէս գաւառական
Առջնորդաց և թղթոյն ամբողջութեանը
վրայ իւր կարծիքը բերէ յառաջիկայ նստին
որ պիտի գումարի 8 օրէն:

Ա. Զ. Դ.

Օսմ. Կայսերական Պանքան պա-
տիւ ունի ծանուցանել իւր յաճախոր-
դաց թէ յառաջիկայ մարտ 13էն սկըս-
եալ (Ն. Տ.) իրենց ընթացիկ հաշուոյ
վրայ քաշուած շէքերն պարտին 20 փա-
րանոց դրոշմաթուղթ մը կրեն :

Օսմ. Պանքան, յառաջիկայ մարտ
2էն սկսեալ (Ն. Տ.) իւր յաճախորդաց
տրամադրութեան ներքեւ պիտի գնէ,
իրենց ունեցած շէքերու տետրակնե-
րուն տեղ, ուրիշ նոր տետրակներ որք
կը կրեն հարկ եղած դրոշմաթուղթն :
— Սակախ կրնան նաեւ իրենց այժ-
մեան տետրակներն ալ դործածել, բայց
այն պայմանաւ որ յառաջիկայ մարտ
13էն սկսեալ իրենց քաշած ամէն շէքի
վրայ 20 փարանոց դրոշմաթուղթ փակ-
ցնեն, վրան գնելով իրենց ստորա-
գրութիւնը :

ՕՍՄ. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՅՑ

ՎԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա. Զ. Դ.

Օսմ. հանրային պարտուց վարչա-
կան խորհուրդը կը ծանուցանէ թէ 1885
մարտ 1/13 ին 1/2 առ 10 տոկոս մը պիտի
վճարուի Օսմ. հանրային պարտուց Ար-
ձանագրեալ և Միացեալ արժէթղթոց
վրայ :

Միացեալ արժէթղթոց տոկոսը պի-
տի վճարուի ի Պոլիս Օսմ. Կայս. Պան-
քային ձեռամբ, ի Լոնտրո և ի Փարիզ
իւր դործակալութեանց ձեռամբ և ի
Վիեննա, Պէրլին, Հոմ և Պրիւսէլ իւր
թղթակցաց ձեռամբ :

ՐԷՀՊԵՐԻ ԹԻՃԱՐԷԹ

(ՍՈՍՁՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ)

Այս տնուամբ, Մելքոն էֆէնտի Խո-
քէնտէր, անգամ Կ. Պոլսոյ առեւտրա-
կան երկրորդ դատարանին, հրատարա-
կած է, Օսմանիէ Տպարանի գեղեցիկ
տպագրութեամբ, ընտիր գիրք մը, որ
կը պարունակէ վաճառականութեան
վերաբերեալ ամէն տեսակ կարեւոր
գիտելեաց և օրինական տրամադրու-
թեանց բացատրութիւնն, հանդերձ ճիշտ
օրինակներով : Խոքէնտէր էֆէնտի Բա-
րիդի վաճառականական գորոցին մէջ
ուսում առած, երկար ժամանակ Կ.
Պոլսոյ մէջ վաճառականութեամբ ըղ-
բաղած և ապա տառներկու տարի ան-
դամութիւն ըրած լինելով Առեւտրա-
կան Դատարանին, այսպիսի հեղինա-
կութեան մը համար պէտք եղած տե-
սական ու գործնական հմտութիւնները
միանգամայն ստացած է :

«Րէհպերի Թիճարէթ» կը վաճառի,
ի գին 12 զրուշ, բոլոր գրավաճառաց
քով, և կը գտնուի նաեւ Բերա, Վայսի
գրատունը :

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Սոյն նոր Քերականն, որ շինուած է
գիւրուսոյց եղանակի վրայ և որ կը պա-
րունակէ 120ի չափ մեծ ու փոքր պատկեր
ընտիր թղթի վրայ, և մաքուր տպագրու-
թեամբ հրատարակուած է «Բաբարսան Ման-
կանցի» տպարանէն :

Գործին գեղեցկութիւնն, մանաւանդ
հրատարակի վրայ տնոր համապատասխանող
ուրիշ քերական մը չի գտնուին յոյս կու-
տան որ ամէն վարժարան ուրախութեամբ
պիտի ընդունի այս քերականն :


Գինն է՝ հատու առնողին համար 50 փա-
րա :

Մեծ քանակութեամբ գնողաց գոհա-
ցուցիչ գեղջ կը տրուի :

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, Էսկի
Չապարէ ճատաէսի, թիւ 65 Բաբարսանի
խմբագրատունը : Ար գտնուի նաեւ բոլոր
հայ գրավաճառաց և կամուրջի գլուխը
ճրավաճառ Պ. Պալուսի և Պ. Յակոբի քով :

ՍԷՅՏԵԼ ԵՒ ՆԱՒԱՐԱՆ ՏՐԷՉՏԱ. [ՍԱ.ՔԱՌՆԻԱ]

Ներդրողի մէջ կա-
րի մեքենայ չինող
ամենամեծ գործա-
րանն :




Գործարանատեարք
«Օբեկտալ Սափահա-
րէն» կոչուած հրու-
շակաւոր ձեռքի մե-
քենային :

ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընտանեաց համար
ձեռքով և ոտքով բա-
նող մեքենայք :

ՆԱՒԱՐԱՆ մեքենայն B

Մոտիվներու և
դերձակներու համար
մեքենայք :



Այս մեքենայն իւր թելին տակ
լայնէկէ տեղ մ'ունի, ինչպէս նաև
ամեն տեսակ կարերու համար նո-
րանոր գործիքներ, և շատ դիւ-
րութեամբ լաւ

ՕՂԱԿ

չինելու համար մասնաւոր գոր-
ծիք մը :

Այդ մեքենային համար աշ-
խարհիս ամեն կողմ արտօնու-
թիւն տունուած է :

Ծանօթ. — Այդ ԿԱՏԱՐՆԵԼՈՒԹԻՒՆԸ չտեսած՝ կարի մեքենայ մի՛ գնէք :

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ



ԳՈՐԾԱՐԱՆԻ ԹԻՒՆԸ ԶՐԻ ԿՈՒՍՈՒՑՈՒԻ

Ընտանեաց համար օլակի գործիք դ՛ 75

Գերձակաց » » » » 125

Թուրքիոյ և Պուլկարիոյ համար

գործակալ և միտերանոցապետ

ԷՄ. Ժ. ՄԷՐՃԱՆՕՅ

Կ. Պոլիս, Հաճօրու խան, Թիւ 47

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆԵՐ



Ամեն տեսակէն 1500 մեքենայ միշտ պատրաստ կը գտնուին :

Սրտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ